

ՍԱՐԴԱՅԱՍԱՐԻ ԱՐԴԻԲՆՔՆԵՐՈՎ ՅԱՅԱՍԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻԸ ՆՈՒԱԶԱԾ Է 130 ՅԱԶԱՐՈՎ՝ ՅԱՍՆԵԼՈՎ 2.9 ՄԻԼԻՈՆԻ

Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունը Փետրուար 7-ին հրապարակած է Հոկտեմբերին կատարուած մարդահամարի նախնական նախնական արդիւնքները, որոնց համաձայն վերջին տասը տարուայ ընթացքին Հայաստանի բնակչութեան թիւը պակասած է 130 հազարով, հասնելով 2 միլիոն 870 հազարի :

Անցեալ տարուայ Հոկտեմբերին Հայաստանի մէջ կատարուած մարդահամարի նախնական տուեալներով, Հայաստանի բնակչութեան, այսպէս կոչուած, հաշուէգրուած թիւը, ուր ներառուած են ինչպէս առկայ, այնպէս ալ այդ պահուն երկրէն բացակայող մարդիկ, կազմած է 3 միլիոն 285 հազար մարդ:

Նախորդ՝ 2001 թուականի մարդահամարի տուեալներով Հայաստանի բնակչութեան թիւը մօտ 3.5 միլիոն մարդ էր: Այս իր հերթին կը նշանակէ, որ վերջին տասը տարիներուն Հայաստանի ընդհանուր բնակչութեան թիւը նուազած է շուրջ 173 հազարով:

Ազգային Վիճակագրական Ծառայութեան մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Կոյունջեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ բնակչութեան թուաքանակի նուազումը՝ 130 հազարով պայմանաւորուած է ե՛ւ արտագաղթով եւ նաեւ բնական աճի հետ կապուած ինդիքներով:

«Բնակչութեան թուաքանակը ձեւաւորուած է ե՛ւ բնական, ե՛ւ մեխանիկական ազդեցութեամբ: Ամէն մէկն իր գործօնը ունեցել է առկայ բնակչութեան թուաքանակի ձեւաւորման վրայ», - ըսած է

Կոյունջեան:

Ազգագրագէտ Հրանոյշ Խառատեան մարդահամարի տուեալները կը նկատէ սարսափելի:

«Մենք բնական աճ չունենք, ներգաղթ չունենք, ունենք արտագաղթ: Իրականում դա սարսափելի թիւ է, եւ եթէ ոեւէ մէկը համարձակուի ասել, որ դե, ոչինչ, որ այսպիսի թիւ ունենք, դա նշանակում է, որ այդ մէկը իր վրայ վերցնում է պատասխանատուութիւն ասելու՝ ոչինչ, որ Հայաստան երկիրը դատարկում է», - յայտնեց Խառատեան:

Հակառակ որ, ազգագրագէտը մարդահամարի տուեալները կը նկատէ մտահոգիչ, այդուհանդերձ, կը կարծէ, որ մարդահամարի վերաբերեալ Ազգային Վիճակագրական Ծառայութեան ցուցանիշները մեղմացուած են: Ան կը կարծէ, որ մարդահամարը վատ կազմակերպուած էր ու բնակչութեան թուաքանակի իսկական պատկերը չարտացոլացներ:

«Ես խորապէս վստահ եմ, որ այստեղ առնուազն 200-300 հազարի ոչ ստոյգութիւն կայ. ստոյգ է, որովհետեւ մարդահամարն է վատ իրականացուել, իսկ մարդահամարը իսկապէս վատ է իրականացուել, թէ եղած հնարաւորի մէջ ցանկալի պատկերն է ձգձգուած ցոյց տրուած, բոլոր դէպքերում իմ ունեցած նիւթերով այստեղ շատ մեղմացրած պատկեր կայ», - յայտնեց Հրանոյշ Խառատեան:

Հայաստանի մնացուն բնակչութեան թուաքանակի վերջնական պատկերը վիճակագրական ծառայութիւնը կ'ունենայ գալիք Հոկտեմբերին: Կարինէ Կոյունջեան տեղեկացուց, որ նախնական արդիւնքներու հետ համեմատած էական տարբերութիւն տեղի չունենար:


ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺՆՏՈՂ ԹՈՒՐԲ ՆԱԽԱՐԱՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԴԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԿԱԾ Է ՁՈՒՑԵՐԻՈՅ ՄԷՋ

Զուլիցերիացի իրաւապահները մտադիր են ձերբակալել Թուրքիոյ Եւրոմիութեան հարցերով նախարար Էկեմեն Պաղըշը, որ հրապարակաւ ժխտած է Հայոց Ցեղասպանութիւնը:

Զիւրիխի պետական դատախազ Քրիսթին Պրաունշուա ըսած է. «Անցեալ շաբաթ մեր դատարանը ստացած էր դիմում, որուն համաձայն Պաղըշ Զուլիցերիոյ մէջ քրէական օրէնսգիրքի 261-րդ յօդուածին մէջ առկայ ազգայնամոլութեան օրէնքին դէմ արտայայտուած է:

Հետաքննութիւն սկսած է, քանի որ դատարանը այդ պնդումը հիմնաւոր նկատած է: «Հիմա մենք պիտի քննենք Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու մասին՝ Էկեմեն Պաղըշի արտայայտութիւնը: Պիտի ուսումնասիրենք նաեւ անոր դիւանագիտական անձեռնմխելիութեան հետ կապուած հարցը եւ աւարտին դատական գործ պիտի բանանք, եթէ այս ամէնը օրէնքին հակասող ըլլայ եւ դիւանագիտական անձեռնմխելիութեան ինդիք չըլլայ», ըսած է դատախազը:

Յունուար 30-ին, Պաղըշ գտնուելով Զուլիցերիոյ մէջ, ուր քրէական պատասխանատուութիւն նախատեսուած է Հայոց Ցեղասպանութեան ժխտման համար, ըսած էր. «Մենք այժմ Զուլիցերիոյ մէջ ենք, եւ ես կը յայտարարեմ, որ 1915-ի դէպքերը Ցեղասպանութիւն չեն: Թող գան ու ձերբակալեն



Թուրքիոյ Եւրոմիութեան հարցերով նախարար Էկեմեն Պաղըշ

գիւս»:

Այս առթիւ, Անգարայի մօտ Զուլիցերիոյ դեսպանը կանչուած է Արտաքին գործոց նախարարութիւն, ուր իրմէ պարզաբանումներ պահանջած են, կապուած Զուլիցերիոյ դատախազութեան կողմէ Թուրքիոյ Եւրոմիութեան հարցերով նախարար Էկեմեն Պաղըշի նկատմամբ հետաքննութիւն սկսելուն կապակցութեամբ:

Դեսպան Պաղըշ շարունակելով իր հակահայ յայտարարութիւնները, «Ալ ձագիրա» հեռատեսիլին ըսած է թէ, Հայոց ցեղասպանութիւնը փաստերով ապացուցման պարագային, Թուրքիա ներդրում կ'ունենայ:

Շաբ.ը էջ 4

ՍԱՐՔՈՋԻ ԿԸ ՅԱՐԳԷ ԹՈՒՐՔԵՐՈՒ, ԲԱՅՑ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ, ՈՐ ԱՆՈՆՔ ԱԼ ՅԱՐԳԵՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

«Փոլիթիք ինթէրնասիոնալ» պարբերականի վերջին թիւին մէջ հրապարակուած է ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու օրինագիծի մասին Ֆրանսայի նախագահ Նիքոլայ Սարքոզիի հետ հարցազրոյց:

Թերթը հարց տուած է. «Ինչպէ՞ս կը վերաբերիք թրքական դիւանագիտութեան վերջին փոփոխութիւններուն՝ Իսրայէլի հետ առձակատման ու հակաարեւմտեան փոփոխութեան: Արդե՞օք դուք անակնկալի եկաք թուրքերու արձագանգէն՝ Հայերու Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծի քննարկման ժամանակ»:

Նիքոլայ Սարքոզի պատասխանած է. «Թուրքիան մեծ տէրութիւն է, որ ունի հզօր քաղաքականութիւն: Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ անոր վարած դիւանագիտութիւնը կրնայ անփոխարինելի դեր խաղալ՝ վերը նշուած շրջաններուն մէջ խաղաղութեան հաստատման համար: Թուրքիան

ամբողջ աշխարհի մէջ, նաեւ Իսրայէլի, բանակցութեան միջոցով, ամենաշատը կրնայ ազդել դէպքերու բնականոն ընթացքին վրայ եւ նպաստել տարածաշրջանի կախնացման:

«Ինչ կը վերաբերի Հայերու Ցեղասպանութեան, որ 1915-ին 1,5 միլիոն մարդու կեանք խլեց, այս պարագային մենք կանգնած ենք սկզբունքային հարցի առջեւ. արդե՞օք պետութեան պատճառով չիւշատակի պարտականութիւնը պէտք է անտեսուի: Իմ համոզումս այն է, որ այդ հարցով զիջողականութիւնը վախկոտութիւն է, որ ի վերջոյ միշտ կը վճարուի: Ես կը գիտակցիմ այս հարցին նրբութիւնը: Լաւ գիտեմ նաեւ, որ Ֆրանսան դասեր չի տար: Ասիկա բոլոր երկիրներու պատիւն է՝ իրենց պատմութեան առջեւ կանգնելու եւ Ֆրանսան շատ բան ըրած է այս առումով: Կարճ ըսած, ես կը յարգեմ թուրքերը, բայց անոնք ալ պէտք է յարգեն իրենց գործընկերները»:

ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ ՅԱՍԵՍԱՏԱՐԱՐ ԱՊԱՅՈՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ Է

Սուրիերոյ մէջ ապրող մեծ թիւով հայերու վիճակի մասին տեղեկութիւններ ստանալու նպատակով, «Ազատութիւն» ռատիոկայանը դիմած է Հայկալի մէջ Հայաստանի հիւպատոս Կարէն Գէորգեանին, որ յայտնած է թէ, հակառակ ընդհանուր մտահոգիչ կացութեան՝ հայութիւնը համեմատաբար ապահով պայմաններու մէջ է:

«Երկրում հայերի դէմ որեւէ տեսակի գործողութիւն չկայ՝ ոչ մի կողմից: Չկան այնպիսի գործողութիւններ, որոնք, ասենք, ուղղուած են հայ համայնքի կամ ինչ-որ մի կրօնական հարանուանութեան դէմ», - ըսած է Կարէն Գրիգորեան՝ աւելցնելով. «Յանցագործութիւնների թիւը մեծացել է, քրէածին իրավիճակը բաւական բարձրացել է: Բայց սա, նորից

եմ կրկնում, ուղղուած չէ որեւէ ազգային կամ կրօնական հարանուանութեան դէմ»:

Հիւպատոսը յայտնած է որ, հայհանո՞ծ շրջանները երկրի հիւսիսն են, ուր իրավիճակը համեմատաբար հանգիստ է եւ մեծ հակակառավարական ցոյցեր չկան:

Ըստ դիւանագէտի, սուրիահայութիւնը չեզոք կեցուածք ունի: Վերջին օրերուն բախումները սաստկացան կառավարական գործերուն եւ ըմբոստներու միջեւ, յատկապէս մայրաքաղաք Դամասկոսի մօտակայ շրջաններուն եւ Հոմս քաղաքին մէջ:

Արեւմտեան շարք մը երկիրներ սկսան փակել Դամասկոսի իրենց դեսպանատուները ու երկրէն հեռացնել իրենց անձնակազմերը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ

ՅԱԿՈԲԲԱԴԱԼԵԱՆ

Ամերիկեան NBC հեռուստա-ընկերութեանը տուած հարցազրոյցում, ԱՄՆ նախագահ Պարաք Օպաման յայտարարել է. «Մենք մտադիր ենք ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, որպէսզի թեհերանին թոյլ չտանք միջուկային զէնք ստեղծել, քանի որ եթէ դա տեղի ունենայ, ապա տարածաշրջանում կը սկսուի սպառազինութիւնների մրցավազք՝ միջուկային սպառազինութիւնների մրցավազք», յայտարարել է ԱՄՆ նախագահը:

Իսկապէս, եթէ միջազգային հանրութիւնն իրանին թոյլ տայ ունենալ միջուկային զէնք, եւ դա արդէն լինի կատարուած փաստ, եթէ իհարկէ դեռեւս այն անկատար է, ապա տարածաշրջանի երկրները պարզապէս ստիպուած են լինելու մտածել միջուկային զինանոցի մասին:

Միջազգային հանրութիւնն այդ դէպքում ոչ միայն «բարոյական» իրաւունք չի ունենայ արգելադրել տարածաշրջանի որեւէ երկրի միջուկային ծրագիր, այլ նաեւ թերեւս հենց ինքն առաջին հերթին շահագրգռուած կը լինի, որ իրանը չընթացատուած լինի միջուկային երկրների օղակով՝ այն ծառայեցնելով որոշակիօրէն որպէս զրահ:

Տարածաշրջանը բաւական բարդ տարածաշրջան է, իսկապէս շահերով, հետեւաբար, եթէ այդ տեղի ի յայտ է գալիս միջուկային տէրութիւն, ապա միւս երկրների համար էլ միջուկային ծրագիրը դառնում է ազգային անվտանգութեան հրամայական: Աւելին, շատ երկրներում դա թերեւս պէտք է արդէն իսկ դառնայ ազգային անվտանգութեան օրակարգի քննարկման կարեւոր հարցերից մէկը:

Այդ թւում նաեւ Հայաստանի պարագայում: Իհարկէ, մեր ազգային անվտանգութեամբ զբաղուող մարմնի օրակարգում կարծես թէ առաւելապէս կոնիակի վաճառքի նոր շուկաներ եւ տրակտորների ներկրում ապահովելն է, բայց երեւի թէ ժամանակն է լրջացնել ազգային անվտանգութեան հարցերի քննարկման ինտիտուտը եւ դիտարկել հնարաւոր մարտահրաւերները, այդ թւում միջուկային ծրագրի նախապատրաստական աշխատանքների սցենարները:

Բանն այն է, որ եթէ յանկարծ միջազգային հանրութիւնն իրանական հարցում այսպէս ասած «կիքս» տայ եւ թոյլ տայ իրանին միջուկային զէնք ունենալ, ապա չի բացառուում, որ դրա յաջորդ օրն իսկ միջուկային ծրագրի մասին կը յայտարարեն Ռուսիան ու Ատրպէյճանը եւս, որոնք կը համարեն, որ իրանի միջուկային տէրութիւն լինելն իրենց պարտադրում է ազգային անվտանգութեան նկատառումից ելնելով եւս ունենալ միջուկային զէնք:

Այդ պարագայում, թերեւս ճիշտ տարբերակը կը լինի այն, որ

Հայաստանը յոյսը դնի իր միջուկային ծրագրի վրայ, ոչ թէ ասեւք ռուսական միջուկային վահանի: Բանն այն է, որ այդ վահանը Հայաստանի պարագայում կարող են աշխատեցնել այնպէս, ինչպէս սահմանների պաշտպանութեան հարցում են աշխատում՝ Հայաստանի սահմանների պաշտպանութեան ռուսական սահմանապահ զինուոր վերածելով ռուսական բանակի «տուգանային գումարտակի»՝ ում պատժում են կամ ուժից փորձում են ազատուել, ուղարկում են Հայաստան ծառայութեան:

Նոյնը կարող է լինել նաեւ միջուկային վահանի դէպքում, երբ միջուկային ռուսները մեզ պաշտպանելու փոխարէն, պայթեն հենց մեր իսկ տարածքում: Ի վերջոյ, ռուսական միջուկային սուզանավերի պատմութիւնները բաւական խօսուն են Ռուսաստանի միջուկային զինանոցի արդիականութեան մասին հնարաւոր դիտարկումների համատեքստում:

Հայաստանը պէտք է յոյսը դնի միայն սեփական միջուկային զինանոցի վրայ, եթէ յանկարծ իրանը յայտարարի միջուկային զէնք ունենալու մասին: Հայաստանը դրանից յետոյ պէտք է հետ չմնայ թուրքիայից եւ Ազրբեյջանից, այլապէս դա կարող է լինել ճակատագրական:

Ի դէպ, ԱՄՆ նախագահի յայտարարութիւնը նաեւ վկայում է, որ եթէ իրանի միջուկային ծրագիրը կանգնեցնելը հնարաւոր չլինի, ապա ԱՄՆ որոշակիօրէն դրական կարող է վերաբերել տարածաշրջանի որոշ երկրներում միջուկային ծրագրերի հեռանկարներին: Այլ կերպ ասած, կարող է քննարկել նաեւ դրանց աջակցելու հարցը՝ ի հակակշիռ իրանին, որն իր միջուկային զէնքը բնականաբար կարող է առաջին հերթին ծառայեցնել տարածաշրջանում գերակայութեան հասնելու, տարածաշրջանում անվերապահ ազդեցութիւն հաստատելու նպատակներին:

Իսկ այդ գործում, Հայաստանում միջուկային զէնքի առկայութիւնը դառնում է տարածաշրջանային, մասնաւորապէս հարակից կասեան հատուածի համար գերկարեւոր խնդիր՝ տարածաշրջանային հաւասարակշռութեան ապահովման տեսանկիւնից, որովհետեւ եթէ թուրքիան եւ Ատրպէյճանը ցուցաբերեցին այդպիսի յաւակնութիւններ, ապա Արեւմուտքը ամենայն հաւանականութեամբ կարող է եւ ի հակակշիռ իրանի չզսպել այդ ծրագրերը, բայց այդ դէպքում էլ ի հակակշիռ թուրքիայի եւ Ատրպէյճանի, թերեւս շահագրգռուած կը լինի նաեւ գուրահեռ խրախուսել Հայաստանում միջուկային զէնքի ստեղծում, նաեւ այն հաշուարկով, որ դառնալով այդ զէնքի «կնքահայրը», կարող է նաեւ միաժամանակ թուրքացնել Ռուսաստանի ռազմաքաղաքական դրամիւսնտութիւնը Հայաստանում եւ տարածաշրջանում:

ՔԱՐՈՋԱՅԱԲԵՐՈՒ ԳԱՂՏՆԻ ԶԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՈՐՇՈՓՆԵՐԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԵԱՆ

Ըստ երեւոյթին իշխանութիւնները հասկացել են, որ ի վիճակի չեն լինելու լիովին վերահսկել առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները, եւ ուզեն թէ չուզեն՝ Հայազգային կոնգրեսն այնտեղ ծանրակշիռ ներկայութիւն է ունենալու: Եւ քանի որ խորհրդարանական խմբակցութիւն ունեցող ընդդիմութիւնն աւելի շատ լծակներ է ունենալու իշխանափոխութիւն իրականացնելու համար, իշխանութիւնները որոշել են «էս զլիսից» պայքարել դրա դէմ: Յամենայն դէպս՝ քարոզչական դաշտում մարտավարութեան փոփոխութիւնը զգացում է:

Օրինակ՝ Արման Մելիքեանը (եթէ լիշում էք՝ 2008-ի նախագահական ընտրութիւններում այդպիսի թեկնածու կար) յայտարարում է, թէ առաջիկայ ընտրութիւններում ՀՀԿ-ն կամ կեղծելու է ընտրութիւնները, կամ էլ կոնգրեսի հետ «մանդատային» պայմանաւորուածութիւն է ձեռք բերելու: Այսինքն՝ ստացում է, որ եթէ կոնգրեսը խորհրդարանում լուրջ ներկայութիւն ունենայ, դա լինելու է «պայմանաւորուածութեան» արդիւնք: Չէ, եկէք իրար ճիշտ հասկանանք: Արման Մելիքեանի կարծիքը հասարակութեանը չի հետաքրքրում, մեր մէջ ասած՝ հասարակութիւնը չէր էլ լիշում, որ ժամանակին Հայաստանում այդպիսի քաղաքական գործիչ է եղել, բայց ինչպէ՞ս է պատահում, որ մարդն առաւօտեան զարթնում է, սափրում, գլուխը քորում ու ինքն իրեն ասում՝ «չբռնե՞մ մի հատ գնամ ասուլիս տամ ու յայտարարեմ, որ լաւագոյն տարբերակը կը լինի ՀՀԿ-ի ու ՀԱԿ-ի միջեւ պայմանաւորուածութեան ձեռքբերումը»: Կամ, ասենք, ընդդիմադիր թերթը «լուր» է հաղորդում այն մասին, որ իշխանական վերնախաւում ուզում են Հայազգային կոնգրեսին 15 մանդատ տալ եւ գործադիրում էլ 4 պաշտօն յատկացնել: Ընդդիմադիր թերթի ներկայացուցիչը երեւի «իշխանական վերնախաւի» այդ յոյժ գաղտնի քննարկումների ժամանակ սեղանի տակ պզգած է եղել եւ թաքուն լսել է ամէն ինչ: Կամ էլ՝ «իշխանական վերնախաւը» նման հարց է քննարկել եւ պատահաբար որոշել այդ մասին տեղեակ պահել ընդդիմադիր թերթին: Ընդ որում՝ պատահաբար այնպէս է ստացուել, որ քարոզչութեան առումով դա խիստ ձեռնառու է իշխանութիւններին: Նախ՝ որովհետեւ յետագայում, երբ Ազգային ժողովում կոնգրեսի խմբակցութիւնը զբաղուի ակտիւ աշխատանքով, կասկած կ'առաջանայ, թէ արդեօ՞ք դրանք այն մարդիկ չեն, ովքեր «գործարքի» արդիւնքում են յայտնուել խորհրդարանում: Եւ երկրորդ՝ եթէ հասարակութեան մէջ կասկած առաջանայ, որ կոնգրեսի եւ իշխանութիւնների միջեւ ինչ-որ պայմանաւորուածութիւններ կան, մարդիկ, բնականաբար, նուազ ակտիւութեամբ կը մասնակցեն ընտրութիւններին: Սա գուտ հոգեբանական հնարք է. ո՞վ կը գնա մարդադաշտ՝ ֆուտպոլ նայելու, եթէ նախապէս ամիսներ շարունակ քարոզուի, որ «խոստացած խաղ» է լինելու:

Բայց փաստն այն է, որ իշխանութիւնները հենց դա են քարոզում, եւ նպատակն էլ նոյնն է՝ որպէսզի հնարաւորինս քիչ մարդ գնա «ստադիոն» (այսինքն՝ մասնակցի ընտրութիւններին): Ինչո՞ւ: Որովհետեւ ընդդիմութիւնը, որպէս կանոն, յաղթում է ընտրութիւններին մասնակցածների շնորհիւ, իսկ իշխանութիւնները՝ չմասնակցածների: Եւ բոլոր նրանք, ովքեր այսօր խօսում են կոնգրեսի եւ իշխանութիւնների միջեւ ինչ-որ պայմանաւորուածութիւնների մասին, անկախ իրենցից՝ օգնում են իշխանութիւններին, որովհետեւ դրա արդիւնքում մարդկանց ակտիւութիւնն է նուազելու: Խօսքը, բնականաբար, ամէն տեղ «ականներ» փնտռելու մասին չէ: Պարզապէս նման լուրեր տարածողները պիտի կարողանան փաստերով ապացուցել դա: Առաւել եւս՝ որ եթէ իրականում նման բան լիներ, իշխանութիւններն իրենք հաճոյքով կը յայտարարէին այդ մասին եւ միանգամայն իրաւացիօրէն կը համարէին, որ դրանով իսկ կոնգրեսի հարցերը լուծուած են (որովհետեւ մեր հասարակութեան համար ՀՀԿ-ի հետ համագործակցութիւնը «զապաղյո» է, եւ դրա ապացուցման դէպքում կոնգրեսի վարկանիշը գրոյցի կը հաւասարուէր):

Ինչ վերաբերում է այդ համագործակցութեան «գործնական մասին», որի համաձայն իշխանութիւններն, իբր, մտադիր են կոնգրեսին 15 մանդատ եւ գործադիրում 4 պաշտօն տալ, ապա Սերժ

Շաք-ը էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶՆԱՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

ՐԱՅԱՍԱՆ

ՀԱԿ-Ի ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՁԵԲԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ԲԱՐԴԱԳՈՅՆ ԽՆԴԻՐ»

Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) մաս կազմող Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ Ստեփան Դեմիրճեանի ներկայացմամբ, ՀԱԿ-ի համամասնական ցուցակի կազմումը «բարդագոյն խնդիր է»:



Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ Ստեփան Դեմիրճեան

Նշենք, որ վերջին շրջանում լրատվամիջոցներում յայտնուել էին հրապարակումներ, թե ընդդիմադիր դաշինքում, որն ընդգրկում է շուրջ երկու տասնեակ քաղաքական ուժեր, տարածաշրջաններ են ի յայտ եկել համամասնական ցուցակի ձևավորման հարցի շուրջ:

«Ինչ վերաբերում է տարածաշրջաններին, ապա դա հեշտ գործ է: Ցուցակ կազմելը բաւականին լուրջ, ծանր գործ է: Պրոբլեմներ լինում են նոյնիսկ մէկ առանձին կուսակցության դէպքում, բնականաբար, հեշտ է ցուցակ կազմել, երբ մի միավորման մէջ ընդգրկուած են տասից աւելի կուսակցութիւններ, կան նաեւ անհատներ, անարժան մարդիկ: Մի խօսքով, բարդ գործ է, բայց անյուծելի խնդիր չկայ», - ասաց Դեմիրճեանը Փետրուար 7-ին լրագրողների հետ հանդիպմանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ ՀԱԿ-ը բանակցութիւններ վարո՞ւմ է այլ քաղաքական ուժերի հետ համագործակցութեան, կամ միգուցէ նախընտրական դաշինքի ստեղծման շուրջ, Ստեփան Դեմիրճեանը պատասխանեց. - «Արդար ընտրութիւնների շուրջ կարելի է համագործակցել ամենատարբեր ուժերի հետ: Այս առումով, իհարկէ, պատրաստ ենք համագործակցել տարբեր ուժերի հետ: Ինչ վերաբերում է դաշինքին, ապա հիմա դաշինքների մասին որեւէ խօսք չկայ, ինքնին արդէն բարդագոյն խնդիր է ցուցակ ձևավորել այս դաշինքով: Չմոռանանք, որ ՀԱԿ-ը արդէն ինքնին լուրջ միավորում է»:

Դեմիրճեանը տեղեկացրեց, որ մինչեւ Փետրուարի վերջը ՀԱԿ-ը

աւարտին կը հասցնի իր համամասնական ցուցակի կազմումը, ինչպէս նաեւ կ'որոշի՝ եթէ առաջադրուածներ լինելու են նաեւ մեծամասնականով, ով որտեղ է առաջադրուելու:

«Ժամանակ դեռ կայ, կարծում եմ, Փետրուարի վերջին յատկութիւն կը մտնի այս հարցում», - ասաց նա:

Ընդդիմադիր գործչի խօսքով, չնայած համոզմունքն կայ, որ իշխանութիւնները կեղծելու են ընտրութիւնները, սակայն կոնգրեսը, այնուամենայնիւ, պէտք է մասնակցի առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին. - «Շատերն ասում են՝ իմաստ չունի ընտրութիւնների գնալը, միեւնոյն է կեղծելու են: Իսկ ի՞նչ է տալու չգնալը: Պէտք է գնալ, պէտք է շարունակել պայքարը»:

«Պաշտօնակազմի ընտրութիւնները նոր լիցք կը հաղորդեն գործունէութեանը, կ'ակտիւացնեն հասարակութեանը, եւ սա կը լինի ճիշդ քայլ», - յայտարարեց ՀժԿ առաջնորդը:

Հարցին, թէ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում ՀԱԿ-ը քանի պատգամաւորական մանդատ է ակնկալում, Դեմիրճեանը արձագանքեց. - «Եթէ գնում ես ընտրութիւնների, ուրեմն պէտք է մոբիլիզացնես ուժերը, պէտք է ամէն ինչ անես յաղթելու համար... Մեծամասնութիւն կամ առնուազն շատ զգալի ներկայութիւն»:

«ՀԱԿ-Ը ԱԶԱՏԱԿԱՆ ՈՒԺ ՉԷ». «ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ»-Ի ՆԱԽԱԳԱՐ

Հայ ազգային կոնգրեսն ազատական ուժ չէ եւ ՀԱԿ-ի լիդերները առիթ ունեցել են յայտարարելու, որ իրենք աւելի շատ սոցիալ դեմոկրատական, քան ազատական ուժ են: Այս մասին, Փետրուարի 6-ին, մամուլի ասուլիսում նշեց «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան նախագահ Խաչատուր Քոքոբեյլեանը:



«Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբեյլեան

Նա յայտարարեց, որ բնաւ չի պատրաստուում քննադատել ՀԱԿ-ին, քանի որ քննադատողներն առանց այդ էլ շատ են:

Խաչատուր Քոքոբեյլեանը, խօսելով ՀԱԿ-ից դուրս գալու պատճառների մասին, նշեց, որ իրենք աւելի շատ ազատականներ եւ դեմոկրատներ են, հետեւաբար գտել են, որ անհրաժեշտութիւն կայ հաւաքուել մի տանիքի եւ դրօշի տակ: Ըստ «Ազատ Դեմոկրատներ»-ի նախագահի, ՀԱԿ-ից անջատուելու հիմնական պատճառներից մէկն էլ ՀԱԿ-ի հիմնական լիդերների հետ ունեցած տարածաշրջաններն են կազմակերպչական, ռազմավարութեան եւ մարտավարութեան ձեւերի ընտրութեան հարցերում:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան նախագահ Խաչատուր Քոքոբեյլեանը եւ «Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը

նր հանդիպել են եւ քննարկել առաջիկայ ընտրութիւններում միասնական հանդէս գալու հնարաւորութիւնը:

Ըստ Քոքոբեյլեանի, «Ժառանգութիւն» այն ուժն է, որը վերջին ընտրութիւններից յետոյ մինչեւ վերջ կանգնեց ժողովրդի կողքին եւ պայքարեց մինչեւ վերջ: Բացի այդ, երկու կուսակցութիւններն ունեն նաեւ զգալի արական նմանութիւններ, իսկ միասնական ցուցակով հանդէս գալու վերջնական պատասխանը կը տրուի երկու ուժերի առաջիկայ համագումարներից յետոյ:

«ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԱՆ ԱԺ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ». ՆԻԿՈՅԵԱՆ

Ազգային ժողովի օրակարգից հայ-թուրքական արձանագրութիւնների հետ կանչուած Հայաստանի նախագահի իրաւասութիւնների շրջանակում է: Այդ մասին Փետրուարի 6-ին, խորհրդարանի ամբիոնից յայտնել է ԱԺ նախագահ Սամուէլ Նիկոյեանը՝ պատասխանելով «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանի հարցադրմանը:



ԱԺ նախագահ Սամուէլ Նիկոյեան

Սաֆարեանը նշել էր, թէ թուրքիայի պետնախարար էրեմեյն Բաղըշը խոստացել է ճանաչել ցեղասպանութիւնը, եթէ գիտականօրէն ապացուցուի ցեղասպանութեան փաստը: Ըստ Սաֆարեանի, նման յայտարարութիւններն անընդունելի են եւ Հայաստանի խորհրդարանը պէտք է ի վերջոյ հետ կանչի արձանագրութիւնները:

«Հայ-թուրքական արձանագրութիւնների հետ կանչումն Ազգային ժողովի օրակարգից Հայաստանի նախագահի իրաւասութիւնների շրջանակում է: Բայց ես կարծում եմ, որ հայ-թուրքական արձանագրութիւնները պէտք է մնան օրակարգում: Հայոց ցեղասպանութեան մասնակցութեան նախարարութեան մամուլի քարտուղար Դաւիթ Կարապետեանը Փետրուար 7-ին մեկնաբանել է Հայաստանի զինուած ուժերի վերաբերեալ «Օքսֆորդ Անալիտիկա» վերլուծական կենտրոնի հրապարակումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՆ-Ն ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ԲՐԻՏԱՆԱՑԻ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան մամուլի քարտուղար Դաւիթ Կարապետեանը Փետրուար 7-ին մեկնաբանել է Հայաստանի զինուած ուժերի վերաբերեալ «Օքսֆորդ Անալիտիկա» վերլուծական կենտրոնի հրապարակումը: «Վերլուծութիւններ կատարելը փորձագիտական կենտրոնների աշխատանքն է: Այլ հարց է, թէ այդ վերլուծութիւնները ինչքանով են համապատասխանում իրականութեանը: Մեզ յայտնի են վերլուծական տարբեր կենտրոնների երբեմն իրարամերժ վերլուծութիւններ», - պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ՝ նշել է Կարապետեանը:

րութեան մէջ մտահոգութիւն են առաջացրել՝ կապուած գինուորական կարգապահութեան անկման եւ հրամանատարութեան ոչ պատշաճ գործելաձևի հետ».

«Օքսֆորդ Անալիտիկա»-ն՝ բխեցնելով, թէ այս խնդրի լուծման՝ իշխանութիւնների ակնյայտ անկարողութիւնը կարող է ազդեցութիւն ունենալ ինչպէս Հայաստանի պաշտպանութեան համակարգի բարեփոխման՝ արդէն իսկ սկսուած գործընթացի, այնպէս էլ առհասարակ՝ տարածաշրջանում ուժերի հաշուեկշռի վրայ:

«Ինչ վերաբերում է պաշտպանական գերատեսչութիւնում իրականացուող բարեփոխումներին, ապա կարող եմ նշել, որ նախարար Սէյրան Օհանեանի զլխավորութեամբ իրականացուող բարեփոխումները համակարգային նշանակութիւն ունեն եւ հանդիսանում են Զինուած ուժերի կայուն զարգացումն ապահովող կարեւորագոյն գործօն», - յայտարարել է պաշտպանութեան նախարարութեան մամուլի քարտուղարը:

Զինծառայողների նուաստացման եւ մահուան փաստերը, վերլուծական կենտրոնի մատուցմամբ, Հայաստանի հանրութեան շրջանում բուռն եւ զգայական բանավէճերի տեղիք են տուել:

«Ու մինչ հանրային գայրոյթն ու քաղաքական ճնշումն ահազանում է, Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը իսկապէս պայքարում է խնդրի լուծման համար», - նշում է գեկոյցը՝ յաւելելով, թէ ի վրումն այս ամէնի, խնդիրը տարակարծութիւնների տեղիք է տուել հենց նախարարութեան ներսում, ինչը դրսեւորում է երկու հակառակորդ խմբաւորումների առկայութեամբ:

Բրիտանական «Օքսֆորդ Անալիտիկա» հետազոտական կենտրոնը հանդէս է եկել Հայաստանի զինուած ուժերին վերաբերող մի հրապարակմամբ, որում հանգամանակից վերլուծութեան է ենթարկել բանակի ներսում տիրող իրավիճակը:

Այդուհանդերձ, «Օքսֆորդ Անալիտիկա»-ն ընդգծում է, որ խնդիրը ցայտուն է դարձել հենց նախարար Օհանեանի որդեգրած՝ առաւել թափանցիկ, բաց եւ բարեփոխական գործելաձևի արդիւնքում:

«Զինծառայողների՝ ոչ մարտական պայմաններում արձանագրուող մահուան դէպքերը շարունակում են քայքայել ազդեցութիւն ունենալ Հայաստանի բանակի վրայ, եւ այս համատեքստում նորակազմակերպչի ստորացման, ծաղրածանակի ենթարկելու, ինչպէս նաեւ անընդունելի վարքագծի այլ դրսեւորումները հան-

«Իրականում ոչ մարտական պայմաններում մահացութիւնների ընդհանուր թիւն այժմ աւելի քիչ է, քան անցած տարի: 2011 թուականին մահուան միայն 26 դէպք է արձանագրուել, մինչդեռ 2010-ին այդ թիւը 43 էր», - փաստում է «Օքսֆորդ Անալիտիկա»-ի վերլուծութիւնը:

ԼՈՒՐԵՐ

ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՆ ՈՒ ԶԻԼԱՐԻ ՔԼԻՆԹՈՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԼՂ ԶԻՄՆԱԽՆԴԻՐԸ



ՀՀ արտգործնախարար էդուարդ Նալբանդյանը եւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը

Աշխատանքային այցով Միւնխենում գտնուող ՀՀ արտգործնախարար էդուարդ Նալբանդյանը Փետրուարի 4-ին հանդիպել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ:

Հայաստանի եւ Միացեալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարները գոհունակութիւն են յայտնել երկու երկրների միջեւ հաստատուած բարձր մակարդակի բարեկամական գործընկերութեան, ինտենսիվ քաղաքական երկխոսութեան, պարբերական շփումների առնչութեամբ եւ պատրաստակամութիւն յայտնել շարունակելու գործուն քայլերը փոխշահաւէտ համագործակցութիւնն առաւել ամրապնդելու եւ խորացնելու ուղղութեամբ:

Անդրադառնալով այս տարի նշուող երկու երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների քսանամեակին՝ էդուարդ Նալբանդյանն ասել է. «Այս յոբելեանական տարում կարելի է արձանագրել՝ համատեղ ջանքերով Հայաստանի եւ Միացեալ Նահանգների միջեւ գործընկերութիւնը գտնուած է հայամերիկեան յարաբերութիւնների պատմութեան մէջ ամենաբարձր մակարդակի վրայ»:

Հայաստանի եւ ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարների հանդիպման օրակարգում են եղել երկկողմ յարաբերութիւններին վերաբերող հարցերի լայն շրջանակ, տարբեր միջազգային կազմակերպութիւնների գործունէութեանը, տնտեսական համագործակցութեան զարգացման եւ ընդլայնման հնարաւորութիւնները, Հայաստանում իրականացուող ժողովրդավարական բարեփոխումների դրական ընթացքը, այս տարի կայանալիք խորհրդարանական ընտրութիւնների նախապատրաստական աշխատանքները,

ինչպէս նաեւ տարածաշրջանային անվտանգութեանն առնչուող հարցեր:

Անդրադարձ է կատարուել նաեւ Մէուլում յաջորդ ամսին կայանալիք միջուկային գազաթափողովի նախապատրաստական աշխատանքներին, «Բաց կառավարման գործընկերութիւն» նախաձեռնութեան շրջանակներում համագործակցութեանը:

Զրուցակիցները հանգամանալից քննարկել են դարբանային հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացի վերջին զարգացումները: Էդուարդ Նալբանդյանը կարեւորեց ԱՄՆ-ի՝ որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի դերակատարութիւնը եւ իր ամերիկեան գործընկերոջը ներկայացրել Յունուարի 23-ին Սոչիում տեղի ունեցած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեյջանի Նախագահների հանդիպման արդիւնքները:

Ղարաբաղեան կարգաւորման առումով պետքարտուղար Քլինթոնը վերահաստատել է ԱՄՆ դիրքորոշումն առ այն, որ հիմնախնդրի կարգաւորումը հնարաւոր է բացառապէս խաղաղ ճանապարհով եւ նշել, որ ԱՄՆ-ն, որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, շարունակելու է իր լիակատար աջակցութիւնը հակամարտութեան կողմերի միջեւ համաձայնութիւնների ձեռք բերմանը եւ հիմնախնդրի հանգուցալուծմանը:

Էդուարդ Նալբանդյանը Փետրուարի 3-4-ը մասնակցել է Միւնխենի՝ անվտանգութեան հարցերով 48-րդ համաժողովին, որին ներկայ էին շուրջ 70 երկրների բարձրաստիճան պատուիրակութիւններ՝ պետութիւնների ղեկավարներ, նախարարներ եւ բազմաթիւ հեղինակաւոր միջազգային կազմակերպութիւնների, ընկերութիւնների ներկայացուցիչներ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԽՏՈՂ

Շարունակուած էջ 1-էն

ղութիւն կը խնդրէ հայերէն: Լրագրողի այն հարցին, թէ թուրքիան կը ճանչնա՞յ արդեօք Հայոց ցեղասպանութիւնը, թուրք պաշտօնեան ըսած է. «Եթէ այդ (Հայոց ցեղասպանութիւնը) պատմականօրէն եւ գիտականօրէն, եւ որ աւելի կարեւոր է, միաձայն ճանչցուի իբրեւ իրական փաստ,


ապա ինչու ոչ»: Թուրք պաշտօնեան ըսած է նաեւ, որ թրքական կողմը պատմութեան արխիւները բանալու եւ ուսումնասիրութիւն իրականացնելու առաջարկով դիմած էր հայկական կողմին, որ սակայն, մերժուած էր: «Յաւոք սրտի, Հայաստանի կառավարութիւնը խիզախութիւն չունեցաւ ընդունելու այդ առաջարկը», - յայտարարած է կեմեն Պաղը:

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՍԵԻԱՆ ՆԻՇԱՆԵԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՐԿԻՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ Է ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵԼ

Պոլսահայ մտաւորական, հրապարակախօս Սեւան Նիշանեանը թուրքիացում 5 ամսուայ ազատազրկման է դատապարտուել՝ ապօրինի շինարարութիւն իրականացնելու մեղադրանքով:

Ինչպէս հաղորդում է թուրքական NTV հեռուստաընկերութիւնը, ազատազրկման համար պատճառ է հանդիսացել թուրքիայի Զմիւռնիայի (թուրքերէն՝ Իզմիր) նահանգի Սելջուկ շրջանի Շիրինջէ գիւղում իրականացուող շինարարութիւնը (ժայռափոր գերեզման կառուցելու համար):

Նշենք, որ սա առաջին դէպքը չէ, երբ ապօրինի շինարարութիւն իրականացնելու մեղադրանքով Նիշանեանն ազատազրկման է դատապարտուում: Մինչ այժմ թուրքական դատարանը Նիշանեանի նկատմամբ մի շարք վճիռներ է կայացրել, որոնց համաձայն պոլսահայ մտաւորականին մօտ 17 տարուայ ազատազրկում է սպառնում: Դատարանի կայացրած բոլոր այդ որոշումները, սակայն, բողոքարկման փուլում են գտնուում: Նիշանեանը տարիներ առաջ Շիրինջէ գիւղում իր սեփական միջոցներով վերակառուցել էր խարխուլ 16 շինութիւն, որից յետոյ դրանք սկսել է օգտագործել որպէս



Պոլսահայ մտաւորական Սեւան Նիշանեան

հիւրանոցներ: Այդ շինութիւնները թուրքիայի հիւրանոցային սեկտորում յայտնի են «Նիշանեանի տներ» անունով: Միայն վերոնշեալ 16 շինութիւնների առնչութեամբ Նիշանեանի դէմ 16 առանձին դատական գործ էր բացուել:

Նիշանեանը յայտարարել է, որ դատարանի այս վերջին որոշումը եւս բողոքարկելու է: «Դատաւարութիւնները շարունակուած են, նոյնիսկ թիւն եմ մոռացել: Դատարաններից եկած ծանուցումներն էլ առանց կարգալու աղբարկղն եմ նետում: Եթէ ճիշդ եմ չիշում արդէն 7 դատաւարութիւն ունեմ», - ասել է մտաւորականը եւ յաւելել, որ, ամէն դէպքում, իր գործունէութիւնը շարունակելու է:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՆ ՀԱՆԴԵՍ ԵԿԱԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԴԵՍ

«RTV» հեռուստաալիքի հետ գրոցում Իսրայէլի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանն առաջին անգամ հրապարակաւ դէմ հանդէս եկաւ Իսրայէլի կողմից Օսմանեան թուրքիացում տեղի ունեցած հայերի զանգուածային սպանութիւնները որպէս ցեղասպանութիւն ճանաչելուն:

Իսրայէլի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը նման յայտարարութեամբ հանդէս է եկել անցած շաբաթուայ վերջին: «Իսրայէլի պետութեան հիմնադրումից ի վեր մենք համաձայն չենք եղել որեւէ այլ պատերազմի, կամ այլ ողբերգութեան առնչութեամբ Հոլոքոստ տերմինի կիրառմանը: Մենք կարծում ենք, որ այն, ինչ տեղի ունեցաւ հրեայ ժողովրդի հետ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, անհամեմատելի է: Աֆրիկայում, Ասիայում, Բալկաններում տեղի ունեցած այլ կոնֆլիկտները, վայրագ սպանութիւնները տերմինաբանական մեթոդի կիրառմամբ հերթական հոլոքոստ դարձնելը մենք չենք ընդունում: Մենք կողմնակից ենք նրան, որ բոլոր փաստերը, պատմութեան տխուր էջերը ներկայացուեն այնպէս, ինչպէս կան», - յայտարարել է նա:

Լիբերմանն անդրադարձել է նաեւ Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագծի ընդունմանը: «Որեւէ այլ երկիր, Ֆրանսիայից բացի, օրէնսդրութեամբ չի ընդունել հայերի ցեղասպանութիւնը: Մենք չենք պատրաստուում միջամտել: Այսօր այն պատմական իրադարձութիւնից քաղաքական վէճի է վերածուել, ուստի չեմ կարծում, որ Իսրայէլն այժմ պէտք է միջամտի այդ ամէնին»:

Իսրայէլի խորհրդարանի Կնեսետի կրթութեան եւ մշակութի յանձնաժողովում են գտնուում Հայոց ցեղասպանութեան ճանաչման, ինչպէս նաեւ Ապրիլի 24-ն Իսրայէլում Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր ճանաչելու մասին բանաձեւերը: 2011թ. Դեկտեմբերին յանձնաժողովում քննարկման դրուեցին վերոնշեալ բանաձեւերը, որոնք, սակայն, այդպէս էլ քուէարկութեան չդրուեցին: Հաղորդուեց, որ յանձնաժողովը յետաձգել է բանաձեւի վերաբերեալ քուէարկութիւնը, որպէսզի խորհրդարանականներին հնարաւորութիւն տայ ուսումնասիրել Հայոց ցեղասպանութեան մասին այլ երկրների խորհրդարանների բանաձեւերը:

ՆՈՒՐՅԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը հրապարակած է Փետրուար 4, 2012 թուակիր հաղորդագրութիւն մը, որ կու գայ տեղեկացնելու թէ 93-ամեայ պատրիարք Թորոս Արք. Մանուկեանի առողջական վիճակը վատթարացած է ու ան կը գտնուի հիւանդանոց՝ անդիտակից վիճակի մէջ:

Նկատի առնելով Սրբազան Հօր այս ծանր վիճակը՝ Սուրբ Աթոռի տնօրէն ժողովը Յունուար 30, 2012-ի իր նիստին որոշած է Պատրիարքական փոխանորդ նշանակել Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը՝ վարելու համար պատրիարքարանի առօրեայ գործերը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը հրապարակած է Փետրուար 4, 2012 թուակիր հաղորդագրութիւն մը, որ կու գայ տեղեկացնելու թէ 93-ամեայ պատրիարք Թորոս Արք. Մանուկեանի առողջական վիճակը վատթարացած է ու ան կը գտնուի հիւանդանոց՝ անդիտակից վիճակի մէջ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ 7 ՏԱՐԻ Է

Ըստ Սուրիական «Ալ Ուաթան» թերթին այժմ պատրաստության մեջ եղող երկրի նոր սահմանադրության համաձայն՝ հանրապետության նախագահի իշխանության ժամանակաշրջանը պիտի ըլլայ եօթ տարի: Արդարեւ, անցեալ տարուան Հոկտեմբերի 15ին, նախագահական յատուկ հրամանագրով սահմանադրության վերամշակման ծրագիրը մշակող յանձնախումբին համաձայն՝ հանրապետության նախագահ մը միայն մէկ անգամ վերընտրելի կրնայ ըլլալ: Իսկ նախագահության թեկնածու մը երեսփոխաններու 20 առ հարիւր գորակցութիւնը վայելելու փոխարէն՝ կրնայ 15 առ հարիւր համեմատութեամբ անոնց նեցուկը վայելել:

Նշենք նաեւ որ Սուրիոյ հանրապետության նախագահի յատուկ

հրամանագրով կազմուած նոր սահմանադրության նախագիծը պատրաստող յանձնախումբը կը բաղկանայ 29 անձերէն, ատենապետութեամբ Մուզհէր էլ Անպարիի: Յանձնախումբին մաս կը կազմէ ընդդիմադրութեան ներկայացուցիչ՝ Քատրի ճէմիլը: Նոր սահմանադրութիւնը կ'արտօնէ քաղաքական արտօնեալ կուսակցութիւններն ու անոնց ընտրական ժողովները, ինչպէս նաեւ դեմոկրատական սկզբունքները:

Նախագահ Ասատ Իր արտասանած վերջին ճառին մէջ յայտնեց որ յառաջիկայ Մարտ ամսուան ընթացքին տեղի պիտի ունենայ Սուրիոյ նոր սահմանադրութեան հանրաքուէն, որուն պիտի հետեւի յառաջիկայ Մայիսին կայանալիք ազգային ժողովի ընտրութիւնները:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱՍՏ ԷԼ ՀԱՐԻՐԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՅԺՄՈՒ ՎԱՐՉԱՎԱՐԳԻՆ ՄԱՍԻՆ

Փարիզէն ստացուած լուրերու համաձայն Լիբանանի Խորհրդարանի անգամ եւ նախկին վարչապետ Սաստ էլ Հարիրի «Թայպը Էլ Մուսթաքպալ»-ին յայտարարութիւն մը կատարելով նշած է. «Ներկայ տարիական վարչակարգը իշխանութեան գլուխ պիտի մնայ եւ պիտի չի մեկնի ոչ այս տարի եւ ոչ ալ յառաջիկայ տարի: Նախապէս մենք տարբեր բան կ'ենթադրէին...»: Յիշեցնենք նաեւ որ Հարիրին առանց պաշտօնական յայտարարութեան, Մէլուտական Արաբիա մեկնելով տեսակցած է գահաժառանգ իշխան Նայէֆ Պըն էլ Ազիզի հետ: Արդարեւ, Հարիրին՝ Ֆրանսայի մէջ իր համակիրներու նեղ

շրջանակին փոխանցած է Մէլուտական գահաժառանգին հետեւեալ խօսքը՝ «Սուրիական վարչակարգի անկումին կապակցութեամբ մեր նախատեսութիւնները տեղին չէին: Այս մէկը ոչ այս տարի եւ ոչ ալ յառաջիկայ տարի կրնայ պատահիլ: Հարցը թերեւս տարիներու կը կարօտի»:

Քաղաքական վերջին իրադարձութիւնները՝ զգալիօրէն ազդած են Հայրիրի լիբանանեան տնտեսական կառուցներու վրայ, որոնց հետեւանքով փակուած են իր կուսակցութեան ընկերային ծառայութեանց կարգ մը գրասենեակները եւ հարիւրաւոր պաշտօնեաներ գործէ արձակուած:

19 ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐ ՊԻՏԻ ՊԱՏՈՒԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

Գահիրէ. Փոխադրութեանց նախարարի որդին Ռայ Լահուտ, 19 ամերիկացիներ եւ 24 ոչ հասութեաբեր ձեռնարկութեանց ծառայողներ ձերբակալուեցան եւ քրէական դատարան յանձնուեցան: Անոնք ամբաստանուած են ապօրէն կերպով արտասահմանեան դրամանիշեր օգտագործելով երկրէն ներս անկայուն իրավիճակ ստեղծելուն համար:

Վերոյիշեալ 43 անձերու կալանքի տակ առնուելը մեծապէս կը վնասէ Եգիպտոս-ԱՄՆ բարձր յարաբերութիւններուն, որոնք ստեղծուած էին երեք տասնամեակներէն ի վեր: Վերոյիշեալ կազմակերպու-

թեանց դէմ շղթայագերծուած արշաւը վրդովեցուցած է Ուաշինգթոնի քաղաքական շրջանակները, որոնք տարեկան մէկ ու կէս պիլիոն (միլիառ) տոլարի օժանդակութիւն կը կատարեն Եգիպտոսի: Այդ օգնութիւնը ներկայիս հարցականի տակ առնուած է:

Վերոյիշեալ հարցի կապակցութեամբ ԱՄՆ-ի պետական քարտուղարուհի Հիլըրի Գլինթընը ազդարարութիւն մը կատարած է Եգիպտոսի, յայտնելով որ ինդրի լուծման ձախողութիւնը կրնայ յանգիլ ամերիկեան օժանդակութեան կորուստին:

ՊԱՂԵՍԻՆ: ՀԱՄԱՍ ԵՒ ՊԱԿ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԱՆ

Պաղեստինեան երկու հակամարտ ուժերը Համաս եւ Պաղեստինի Ազատագրական կազմակերպութիւնը (ՊԱԿ) վերջերս նոր համաձայնութիւն մը կնքեցին: Արդարեւ, երկու հոսանքներու ղեկավարները համաձայնեցան կառավարական միացեալ դահլիճի մը կազմութեան շուրջ, ղեկավարութեամբ Մահմուտ Ապպասի: Այս վերջինը ցարդ կը վարէր Պաղեստինեան պետութեան թէ նախագահի եւ թէ վարչապետի գոյգ պաշտօնները: Շատ հաւանաբար նոր անձ մը նշանակուել վարչապետի պաշտօնին համար: Երկու կողմերն ալ համաձայնեցան ազատ արձակել քաղաքական բանտարկ-

եալները, իսկ մօտաւոր ապագայն կազմակերպել երեսփոխանական ընդհանուր ընտրութիւնները:

Միւս կողմէ Իսրայէլի հետ բանակցութեանց վերսկսելու համար Համասի նկատմամբ վեթօ կը գործածուի հրեաներու կողմէ, քանի որ տակաւին Համասը կը նկատուի անհրաժեշտ կազմակերպութիւն մը, որ կը ծրագրէ կործանել Իսրայէլը: Համասը որ ծայրայեղական նկատուելով կը նախապէս մերժած էր բանակցիլ Իսրայէլի հետ, այժմ իր դիրքը մեղմացնելով կը յօժարի երթալ նոր համաձայնութեանց, գլխաւորաբար վերջնական գինադարի:

«ԵՐԿԵՆԵՔՈՆ»Ի ՄԱՍԻՆ WIKILEAKS-Ի ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Wikileaks-ը հրապարկած է ԱՄՆ-ի մէջ Թուրքիոյ դեսպանատան գաղտնի փաստաթուղթերէն մէկը, ըստ որուն, Թուրք ոստիկան մը «էրկենեքոն» գաղտնի կազմակերպութեան հետ կապուած մանրամասնութիւններ հրապարկած է: Անոնք լուսանկարներ եւ փաստաթուղթեր են՝ կապուած Թուրքիոյ գլխաւոր շտապի նախկին պետ Պիւեուքանըթի դասեր սեռական կեանքին:

Շնտրու-ի հաղորդմամբ 24 Նոյեմբեր 2008ին գրուած այդ գաղտնի փաստաթուղթին մէջ մանրամասն կը ներկայացուի 21 Նոյեմբեր 2008ին ԱՄՆ-ի Անգարայի դեսպանութեան մէջ Թուրքիայի

անվտանգութեան ուժերու կողմէ պատրաստուած գեկոյցը: Չայն ներկայացնող Թուրք ոստիկանները նշած են, որ «էրկենեքոն» Թուրքիոյ մէջ քառու եւ անկայունութիւն առաջացնելու նպատակով որոշած են ստեղծել շարք մը անհրաժեշտ կան խումբեր, որոնք կապուած են նաեւ Տինքի սպանութեան հետ:

Գտնուած են նաեւ ապացոյցներ «Ժողովրդական հանրապետական» կուսակցութեան նախագահ Տենիզ Պայքալի կաշառք վերցնելու վերաբերեալ: Փաստաթուղթին մէջ կը նշուին նաեւ անհատներու անուններ, որոնք տարբեր միջոցներով պայքարած են ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ կառավարութիւններուն դէմ:

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ԱՏՐՊԵՅՅԱՆԻ ՄԵՋ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՈՂ ՅԱԲԱԿՆՈՐԴՆԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐԻՆ ԻՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՅԱՌՈՒԻ

Հայաստանի առաջնակարգ շախմատիստ Լեւոն Արոնեան այսօր յայտարարութիւն ըրած է, որ ուղղուած է ՖԻԴԵ-ի նախագահ Գիրսան Իլիմօրովիին եւ ՖԻԴԵ-ի նախագահական կառույցի անդամներուն: Յայտարարութեան մէջ ըսուած է.

«Լրատուամիջոցներէն տեղեկացայ, որ աշխարհի ախոյեանի կոչման յաւակնորդներու մրցումներու իրականացման յայտ ներկայացուցած են Ատրպէյճանի եւ Պոլկարիոյ ճատրակային դաշնութիւնները:

Կ'ուզեմ տեղեկացնել ձեզի, որ Ատրպէյճանի մէջ տիրող ընդհանուր մթնոլորտը եւ մեր երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող մշտական լարուածութիւնը անհնար կը դարձնեն իմ մասնակցութիւնը Ատրպէյճանի մէջ իրականացուող որեւէ բարձրակարգ մրցաշարի:

Այդպիսի պատասխանատու եւ կարեւոր մրցոյթ, ինչպէս աշխարհի ախոյեանի կոչման յաւակնորդներուն մրցաշարը, անոր մասնակիցներէն կը պահանջէ հոգեկան անդորր եւ ուժերու արտակարգ կեդրոնացում: Ճատրակի հետ կապ չունեցող որեւէ հանգամանք պէտք չէ գրոսմայթըրը խանգարէ ցուցադրելու այն ամէնը, ինչին ան ընդունակ է: Խիստ անհրաժեշտ է բարոյհանգեքանական բարենպաստ մթնոլորտ, որ, ցաւօք, այս պահուն Ատրպէյճանի մէջ չկայ ունէ հայ անձնաւորութեան համար: Բոլոր



մասնակիցները պէտք է գտնուին հաւասար պայմաններու մէջ, որ անհնար է յաւակնորդներուն մրցաշարը Պաքուի մէջ իրականացնելու պարագային: Անվտանգութեան երաշխիքներն ու իւրաքանչիւր տեսակի լրացուցիչ աջակցութիւնը չեն կրնար օգնել իրավիճակին:

Հաշուի առնելով վերոյիշեալը, կը տեղեկացնեմ ձեզ, որ ես հաճոյքով պիտի մասնակցեմ աշխարհի ախոյեանի կոչման յաւակնորդներու մրցաշարին՝ աշխարհի որեւէ այլ երկրի մէջ, բաց իմ մասնակցութիւնը Ատրպէյճանի մէջ իրականացուող յաւակնորդներու մրցաշարին կը բացառուի:

Յոյսով եմ, որ դուք հաշուի կ'առնէք այս նկատառումները՝ մրցաժամի հարցը նախագահական խորհուրդի նիստին քննարկելու ժամանակ»:

ՈՒՍՆԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑ ԵՐԵՔ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԵՋ

Փենսիլվանիա նահանգի նախկին ծերակուտական Ռիք Սանթրոլմ յաղթեց Գոլորատո, Միսուրի եւ Մինեսոթա նահանգներուն մէջ կայացած Միացեալ Նահանգներու Հանրապետական կուսակցութեան նախնական ընտրութիւնները: Սոյն ընտրութիւնները տեղի կ'ունենան որոշելու նախագահական ընտրութեան համար կուսակցութեան թեկնածուն: Սանթրոլմ մինչեւ օրս յաղթած է Այովա, Գոլորատո, Միսուրի,

Մինեսոթա նահանգներու ընտրութիւնները:

Անոր մրցակիցներէն, Միթ Ռոմնի շահած է Նիու Հեմփշայրի, Ֆլորիտայի եւ Նեւատայի ընտրութիւնները իսկ Նիւթ Կլինկըիչ միայն հարաւային Գարոյլայնայի:

Վերլուծաբաններու կարծիքով, Սանթրոլմի այս յաղթանակը փոփոխութիւններ պիտի մտցնէ նախընտրական քարոզարշաւին մէջ, որովհետեւ ցարդ Ռոմնին կը նկատուէր յաղթողի միակ թեկնածուն:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՎԵԼԻ ԱՂԲԻՐԸ
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՊԱՏԿԵՐԸ ԶԻ ՓՈՒՈՒՄ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՅՆՊԵՍ

ՍԱՄՈՒՔԷԼ ԿՈՍԵԱՆ

Պարզու՞մ է Հայաստանի համար ամենակարեւորը ընտրակարգն է՝ 100 տոկոսանոց համամասնակա՞ն, թէ՞ նախկինի պէս համամասնականն ու մեծամասնականը միասին: Յաղթահարեցինք այս արգելքը, նշանակում է երկիրը յաւիտեանս կ'ազատագրուի բոլոր սոցիալական, քաղաքական մարտահրաւէրներից եւ վերջնականապէս ընթացք կը տայ երկրի անվտանգութեան ու կայունութեանը: Դրա համար էլ ազգովի, բան ու գործը թողած՝ փորձում ենք այդ խնդրի լուծումը գտնել: Եւ այսպէս, ինչո՞ւ 100 տոկոսանոց համամասնական... Որպէսզի օլիգարխները կամ պատահական մարդիկ Ազգային ժողովում չչայտնուեն: Բացատրութիւնը տրամաբանական կը լինէր, եթէ միաժամանակ ասէին, որ պատգամաւոր դառնալ ցանկացող օլիգարխին ո՞նց են գտնելու, որպէսզի այդ օրէնսդրօրէն չմտածողը հիմա էլ համամասնական ցուցակով Ազգային ժողովում չչայտնուի: Օլիգարխի համար տարբերութիւն չկայ, թէ փողերն ինչպէս ու որտեղ ծախսի եւ իր ուզած տեղը որ դռնովներս մտնի: Չէ՞ որ բոլոր կուսակցութիւններն էլ ներդրողներ են փնտռում, որովհետեւ գիտակցում են, որ ամենաազդեցիկ գաղափարների պարագայում էլ քարոզարշաւը ծախսեր է պահանջում: Գուցէ չենք սրանով է պայմանաւորուած, որ թեկնածուների ցուցակները մինչեւ վերջին օրը փոփոխութիւնների են ենթարկուում: Ուրեմն կորչեն օլիգարխները եւ բարի գալուստ, օլիգարխները:

Ինչ-որ չափով նաեւ երեւոյթի գնահատման կրկնակի ստանդարտն է պատճառը, որ մեզանում ընտրութիւնների հանդէպ վստահութեան գործակիցը տարիների հետ ոչ աճում է, այլ նուազում է: Չկայ մի կուսակցութիւն կամ անկախ թեկնածու, որ չկարեւորի ազատ, արդար, թափանցիկ ընտրութիւններ անցկացնելու անհրաժեշտութիւնը: Բոլորը դա են բարձրաձայնում, խօսում են առաւօտից գիշեր, պայքարում են ու անհասկանալի է, ինչպէ՞ս է, երբ բոլորը նույնն են ուզում, սակայն այդպէս էլ այդ ազատ, արդար ու թափանցիկը չի կայանում:

Հաւանաբար այս ընտրութիւններից յետոյ էլ կեղծիքների դէմ բողոքի ընդվզումներ, յուզումնալից ելոյթներ կը լինեն, կը պահանջեն պատժել մեղաւորներին: Սա է աշխարհի բոլոր ընտրութիւնների վերջը, որն արդէն սովորական է դարձել, որովհետեւ եթէ ընտրութիւն է, չընտրուածները դժուարութեամբ պիտի հաշտուեն, որ չեն ընտրուել:

Եւ որպէս կանոն չընտրուելու միակ պատճառը լինում է ընտրա-

կեղծիքը:

Հազիւ թէ կուսակցութիւն լինի, որ իր անյաջողութիւնը բացատրի սեփական ծրագրի խեղճութեամբ: Ուստի բոլոր ընտրութիւններից առաջ կուսակցական ընկերներին յուզողը այն ընտրակարգի ընտրութիւնն է, ինչը նրանց կարծիքով թոյլ կը տայ հնարաւորինս խուսափել կեղծիքներից: Իսկապէս հարցը բարդ է, եւ շատերը հարցի շուրջ նոյնիսկ պատգամաւորական լսումներ են պահանջում: Հետաքրքիր է այդ լսումներից մէկի ժամանակ հարցնել. ինչպէ՞ս վարուել, եթէ արժանաւոր մի թեկնածու, կամ թեկնածուներ, եղած կուսակցութիւններից եւ ոչ մէկի գաղափարները չեն ընդունում ու չեն կիսում, բայց ուզում են իրենց գիտելիքներն ու փորձն Ազգային ժողովի պատգամաւորի կարգավիճակով հասցնել ժողովրդին: Եթէ 100 տոկոսանոց համամասնական լինի, ի՞նչ են անելու: Հօ ամբողջ ազգը չի՞ կարող կուսակցական լինել: Եւ որտե՞ղ է գրուած, որ ազգի անշահախնդիր նուիրեալներն ու գաղափարակիրները միայն կուսակցականներն են: Գուցէ հակառակն է... Հասկանալի է շատերի մտահոգութիւնը՝ արդար ընտրութիւններ անցկացնելու, իսկապէս ժողովրդական իշխանութիւններ ձեւաւորելու համար: Համաշխարհային հանրութիւնը նոյնպէս մեզանից դա է պահանջում: Բայց, աւաղ, արդար ընտրութիւններ անցկացնելու մարտահրաւէրը դեռեւս մեզ չի յաջողում յաղթահարել: Ու երեւի նրա համար, որ դեռ չենք կարողանում կողմնորոշուել, թէ ինչն է կարեւորն ու առաջնայինը:

Գուցէ անյաջողութեան պատճառը ոչ թէ գործող ընտրակարգի անլիարժէքութեան, այլ մեր մէջ պիտի փնտռել, հաշուի առնելով մեր թերի դաստիարակութիւնը, բարոյականութեան եւ արժանապատուութեան մեր պատկերացումներն ու դաւանած արժէքները: Գուցէ հիմնական պատճառներից մէկն էլ մեր անվստահութիւնն է, պետական մտածողութեան բացակայութիւնը, որն էլ ան տարբեր է դարձնում մեզ ոչ միայն երկրի, այլեւ մեր ճակատագրի նկատմամբ: Հոգեբանական այս նահանջներն ավելի վտանգաւոր են, որովհետեւ ռեալիստի պէս մարդու ներսից ջնջում են պատասխանատուութեան ամենանուազագոյն դրսեւորումն անգամ: Դրա համար էլ ոչ թէ մեր ձայնն ու քուէն ենք վաճառում մի քանի հազարով, այլ՝ յոյսը, որ երբեւիցէ կարողանանք վերագտնել մարդու մեր արժանապատուութիւնը, որից յետոյ արդէն կարեւոր չէ ով է ընտրուողը՝ Պօղոսը թէ Պետրոսը, քանի որ հոգեւոր խեղանդամութեան պահին, ով էլ ընտրուի՝ անկախ սեռից,

տարիքից եւ մասնագիտութիւնից, միեւնույն է՝ Պօղոս է կամ Պետրոս: Մարդկանց Երկրին կապելու, հայրենասիրութիւն ներշնչելու, դէպի խղճի ու հաւատի տաճարը ուղղորդելու, պետականութեանը անդամագրելու, հոգեւոր արժէքները դավանելու խնդիրներն են միայն հնարաւոր երազելի հանգրուանին համեմատելի արդար ընտրութիւններ կազմակերպել: Այս դէպքում բոլոր ընտրակարգերն էլ յարմար կը գան, որովհետեւ իւրաքանչիւրն իր ապագայի ընտրութեան պատասխանատուութիւնը պիտի գզայ, որովհետեւ պիտի հաւատայ, որ իսկապէս ինքն է իր ապագայի ընտրողը: Գուցէ մի օր այդպէս էլ լինի, բայց այսօրու համար հեռաւոր տեսիլք է թւում, քանի որ կամովի մեզ օտարել ենք մեր մշակութային ավանդույթներին տէր կանգնելու հնարաւորութիւնից: Համարեա բոլոր կուսակցութիւնների նախընտրական ծրագրերում մշակութիւնը նուիրուած մէկ կամ երկու նախադասութեան կը հանդիպես կամ ընդհանրապէս այդ մասին ակնարկ իսկ չի լինի: Իսկ մեր մէջ մեռնող քաղաքացուն վերակենդանացնելու, մեր հայրենասիրութիւնն



ու երկրի ճակատագրի նկատմամբ մտահոգութիւնները կեանքի կոչելու, ազնուութեան եւ արդարութեան, խղճի ու հաւատի գանգերը հնչեցնելու ամենահզօր կուսակցութիւնը ոչ թէ ընտրութիւնների նախաշեմին է մէջքով շրջւում մեզ, այլ դրանից շատ առաջ, որովհետեւ մենք արդարութիւնը այնտեղ չենք փնտռում, որտեղ այն գտնելու հաւանականութիւնը իսկապէս 100 տոկոս է, այլ որոնումները կազմակերպում ենք այնտեղ, ուր մեզ է յարմար:

Այ թէ ինչու պատկերը չի փոխուում, բովանդակութիւնը նոյնպէս ու նենում ենք այն, ինչ ունենում ենք՝ նոյն կտորած տաշտակն ու ժողովրդի մեծամասնութեան անտարբերութիւնն ընտրական արդիւնքների վերաբերել:

CLOTHING DRIVE

Donate your clothes, new clothes, shoes, and similar items. You no longer wear, it will make a difference in someone else's life.

Gaidz Youth Organization, with the help of Homenmen, (Armenian Athletic Association) is hosting a clothing drive for underprivileged children in Armenia. All of the items collected will be donated to Armenian Orphanages.

We will be collecting all donations at 1060 N. Allen Ave Pasadena Ca, 91104 on Feb 11, 12, 18 & 19 from 10AM to 5PM
Or
We can pick up the donations at your convenience
For information please call 818-913-9524

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակները և մանուկները Բացարձակապէս բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային և մկանային ցաւեր: Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

«Կայծ» Երիտասարդական Միութիւնը
ձեռնարկած է «Հագուստահաւաք»-ի
Ի նպաստ Հայաստանի կարիքաւոր ընտանիքներուն
Եթէ ունիք չգործածուած, կամ լաւ վիճակի մէջ
գտնուող տարբեր չափի զանազան հագուստներ՝
յանձնեցէ՛ք մեզի, Հայաստան առաքելու համար:
Յաւելեալ տեղեկութիւններու համար
զանգահարել՝ (818) 913-9524 թիւին:

2011-ԵՐԵՒԱՆԵԱՆ ՕՐԵՐ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

1. ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳՍԵՐ

2006 թ. Մայիսին Երեւանում եղբորս կնոջն ու երիտասարդ տղային հողին յանձնելուց անցել է աւելի քան 5 տարի: Այդ տարիները ինձ համար եղան հոգեկան ապրումներով ու տրամաթիւններով անվերջ երկարող տարիներ, որոնք անընդհատ ճնշում էին ներսս ինչ որ բան եւ չէի կարողանում ազատուել մղձաւանջից: 2011-ին կամաց-կամաց սկսեցի յաղթահարել այդ ճնշումները եւ Հոկտեմբերի 12-ին, առաջին անգամ լինելով, Լոս Անճելոս-Մոսկովա-Երեւան չուերթով հանգիստ հասայ Երեւան, չհաշուած մաքսատներում խստագոյն ստուգումներին (կոշիկներն էլ հանած)՝ ուղեւորների անվտանգութիւնն ապահովելու նպատակով: Ուղեւորներին ընդունեցին օդանաւակայանի շահագործման յանձնուած յարմարուէտ նոր շէնքում, որի ուղեւորների ճամպորկների սպասարկման սրահի դռնից դուրս ես գալիս ուղիղ մեքենաների կայանատեղին, որտեղ քեզ սպասում են դիմաւորողները: Նոյեմբերի 12-ին վերադարձայ Լոս Անճելոս դարձեալ օդանաւակայանի նոր շէնքով, որի մուտքի ընդարձակ սպասարահի առաստաղը բաւական բարձր է, ամբողջութեամբ կառուցուած է երկաթէ կոնստրուկցիայով, սակայն խօսուող չէ, Նայկական ճարտարապետութեան հետքը չի երեւում, որպէսզի Հայաստան այցելող այցելուները հիւանան դրանով, մինչեւ օդանաւ նստելը: Նախքան Երեւան գնալս, Լոս Անճելոսում տեղեկացայ, որ Երեւանի մաքսատանը մուտքի վիզայի համար պէտք է վճարել 15 տոլար: Դեռ մինչ այդ Սփիւռքի նախարար Հրանոշ Յակոբեանը իր հեռուստատեսութեամբ յայտարարել էր, որ սփիւռքահայերի այցելութիւնները Հայաստան աւելի գրաւիչ դարձնելու համար վիզայի արժէքը սահմանուած է 7 տոլար: Բայց իմ այցելութեան ժամանակ այդ արժէքները չքացել էին, վիզայի համար ես վճարեցի 15 հազար տրամ` համարեա 42 տոլար (մէկ տոլարը 360 դրամ էր): Այցելեցի Երեւանում ապրող հարազատներին, ննջեցեալներին շիրմները` հանգստացնելով հոգուս տուայտանքները, նաեւ մի հայեացք գցեցի Երեւանի վրայ, որը օրը օրին փոխում է իր դէմքը եւ իւրաքանչիւր հայի համար, որտեղ էլ նա ապրի, հոգու խորքում տեղ դրած Մասիսի եւ Արարատի նման յա-

ւերժ մասունք է: Լոս Անճելոս վերադառնալուց չետոյ որոշեցի հպանցիկ անդրադառնալ ուղեւորութեանս եւ հային յուզող որոշ հարցերի:

Մենք, հայերս ենք շահագրգռուած մեր հայրենիքի եւ նրա գեղեցիկ մայրաքաղաք Երեւանի գոյութեան ու յարատեւման հոգսերով: Միայն մենք կարող ենք հասկանալ մեր ցան ու հոգսը, մեր ուրախութիւնն ու տխրութիւնը հայրենիքի հանդէպ, որոնք ուղիներ` վերացնելու Հայաստանում գոյութիւն ունեցող թերութիւններն ու անօրինականութիւնները եւ ստեղծելու Նոր հայրենիք, որը ձերբազատուելով վաշխառուներից` ժողովրդին ստրուկ դարձրած ու թալանող օլիգարխներէից եւ մաֆիայից, որոնց ղեկավարում է Հայաստանի ներկայիս իշխանութիւնը, դառնայ ժողովրդավար երկիր, դադարի օրից-օր աւելի մեծ չափերի հասնող արտագաղթի հոսքը, որը դատարկելով Հայաստանը ուժասպառ է անում այն եւ հարցականի տակ դնում Հայաստանի գոյութիւնը (առանց ժողովրդի), հետեւաբար Հայաստանի իշխանութեան քմահաճոյքով գործող չգրուած օրէնքները պէտք է անյապաղ իրենց տեղը գիջեն սահմանադրութեամբ ամրագրուած օրէնքներին:

Հայաստանից արտագաղթի մասին ասագանգերը շատ են: Մեր օրերում այն գտնուած է Հայաստանի եւ սփիւռքի, ինչպէս նաեւ օտար մամուլի ուշադրութեան կենտրոնում` Անգլիական BBC, Ֆրանսական AFT մամուլի գործակալութիւն, որն իր «Հայկական արտագաղթի հետեւանքով ձեւաւորում է միայն կանանցով բաղկացած գիւղեր» յօդուածում նշում է, որ ՄԱԿ-ի ֆոնդի տուեալներով տարեկան 25-30 հազար մարդ է լքում Հայաստանը, Հայաստանի քաղաքացիների 44 տոկոսը իր համար ապագայ չի տեսնում Հայաստանում: Եթէ Հայաստանի կառավարութիւնն ի միջի այլոց է մօտենում այդ հարցին, ապա նրա ճակատագրով մտահոգուող հայորդիներ լուրջ կերպով մտահոգ են եւ արտագաղթը կանգնեցնելու լուծումներ են առաջարկում: Արդէն ասագանգեր են հնչում, որ Հայաստանում մահացողների թիւը գերազանցում է ծնունդների թիւին. «Իսկ այսօր, աւելի քան երբեք մեր գենեֆոնտին, մեր հայրենիքին իրական վտանգ է սպառնում, որի հետ հաշուի չնստելը, յետագայում ճակատագրական է լինելու» գրում է Սոնա Արշարունին «Առաջը ջուր

հետեւը սուր» յօդուածում (տե՛ս «Մասիս», Հոկտ.1, 2011, էջ 13): Հեղինակը արտագաղթը կանխող միջոցներից նշում է Բելգիայում Հայաստանի իշխանութիւնների յայտարարութիւնը ստոր եւ սուտ միջոցների մասին. «Հետաքրքիր է. ի՞նչ արդարացումներ ունի Աժառուղջապահութեան հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյեանը, որը գերազանցելով իր լիազօրութիւնների աներեւակայելի սահմանները, եւրոպացիներին այնպէս է համոզել, թէ իբր Հայաստանում անվճար բժշկութիւն է, բուժում են բոլոր տեսակի ծանր հիւանդութիւնները եւ ամենակարեւորը` անվճար...»: Բելգիան հաւատարմով այդ յայտարարութեանը մտադիր է Բելգիայում ծանր հիւանդութիւնների բուժում ստացող հայ փախստականներին ետ ուղարկել Հայաստան: Իսկ Հայաստանի հիւանդանոցներում, պատերին փակցուած են բոլոր հիւանդութիւնների բուժման գնացուցակները, որոնց գները բոլորովին մատչելի չեն աշխատանք չունեցող, թոշակաւու եւ անօթեւան անձանց համար:

Հայաստանը տարածաշրջանում զգալի կշիռ ունի բաւական հիւանդութիւնների բուժման գծով` յանձինս սփիւռքահայ նուիրուած մասնագէտների առանց շահախնդրութեան ներդրած ջանքերի եւ նրանց` հիւանդանոցներին համապատասխան բժշկական սարքաւորումներով ապահովման (նուիրելով), որպէսզի հայրենիքի հայրենակիցները բուժուեն ճիշտաբար: Բայց ոչ նրա համար, որ դրանք օգտագործուեն որոշ մարդկանց անձնական գրպանների ուռճացման համար, իսկ հիւանդները տառապելով հեռանան կեանքից: Թոշակաւու հիւանդ կամ անօթեւան անձինք բուժուելու համար ո՞րտեղից են ճարելու այդքան դրամ...:

րաստուէին: Ապստամբութիւնը կանխելու նպատակով քննիչ յանձնարարութեամբ մը կը կազմուի:

Մկրտիչեան կը պատմէ որ 16 Ապրիլ 1914 Ուրբաթ օր Տիարպաքրի հայերու բնակած Հաբէշիք թաղամար կը պաշարուի գինուորներու ու միլիաներու կողմէ, սուներու մէջ ապօրէն գէնք կը փնտռուի: Զինուորական փախստականները, փոխանակ բանակին յանձնուելու, կը դրուին իջեալի բանտին մէջ:

Երկու օր վերջ Տիարպաքրի իհայկական բոլոր բարեսիրական հաստատութիւններու վարիչներն ու հայ յառաջադէմ անձերը կը ձերբակալուին: 21 Ապրիլին ալ Դաշնակ, Հնչակ ու Տէօքթաթ կուսակցութիւններուն նախագահներն ու օգնականները կը ձերբակալուին:

Յետոյ, վերջապէս 1 Մայիսին հայ հաւաքականութեան բոլոր զարգացած տարրերը առեւտրական, բժիշկ, փաստաբան, խանութպան կամ պետական պաշտօնէայ, նաեւ Զիլկատեան Եպիսկոպոս, եւ Կաթոլիկ ու Բողոքական միւս հոգեւորականները ներս կ'առնուին:

Ձերբակալուածներէն ոմանց եղունգները կը քակուին: Տանջանքներու տակ, կը պահանջուի անոնցմէ որ խոստովանին թէ ո՞ւր պահուած են գէնքները: Զիլկատեան Եպիսկոպոս նախ քաղաքին մէջ կը պտրտուի ձեռքերը կապուած վիճակով, յետոյ զայն կը հրկիզեն: Մկրտիչեան իր տեղեկագրին մէջ բոլոր ձերբակալուած անձնաւորութիւններուն անունները տուած է: Բանտին մէջ մտաւորապէս հազար հոգի բանտարկուած էր: Բէշիտ Պէյ աւելի վերջ Թալաթ Փաշային կը տեղեկացնէ թէ քանի գէնք, ատրճանակ ու փամփուշտ երեսան հանուած էին այս բոլորէն վերջ: Բէշիտ Պէյ աւելի վերջ Թալաթ փաշային կը յանձնարարէ որ այս բանտարկեալներուն մէկ մասը ղրկուի Մուսուլ ու ձիւղի:

Ահա Աքթար իր երկարաշունչ յօդուածին մէջ տակաւին կը պատմէ թէ Իթթիհատական երեսփոխան Փիրինճիգատէ Ֆէվզի Պէյ

29 Ապրիլ 1915ին ճամբայ կ'ելէ դէպի ձիւղի, ճամբուն վրայ ուր կը հանդիպի մահմետականներուն ու քիւրտերուն կը քարոզէ որ անոնք պէտքէ հնազանդին մահմետականութեան հրահանգին ու կոտորեն հայերը, առանց խտրի դնելու մանուկներու ու ծերունիներու միջեւ: Պիտի ինայուրի միայն երիտասարդ աղջիկները, որոնց հետ ամուսնանալը ընդունուած է կրօնքով: Փիրինճիգատէ Ֆէվզի Պէյ վերջապէս համաձայնութիւն կը գոյացնէ նաեւ Բամանլը ցեղախումբի անդամներուն հետ, որոնց երկու որդիները կը փնտռուին զանազան յանցագործութիւններու պատճառաւ:

Փիրինճիգատէ կը յայտնէ թէ երկու որդիները ներման պիտի արժանանան պայմանաւ որ անոնք նաեւ կ'ապահովեն ու այդ նաեւ կ'ապահովուին իւրաքանչիւր հայերը Տիարպաքրի վրայ տանին ու ճամբան սպանուելով գետին մէջ նետեն: Ինչ հարստութիւն որ ունին սպանուած հայերը, պիտի յանձնուին երկու որդիներուն ու անոնց օգնականներուն: Այս վերջիններն ալ բաժին մը պիտի հանեն նաեւ Փիրինճիգատէին, որ մէկ մասը կը խոստանայ յանձնել Կարմիր Մահիկին: Երկու որդիները երեք կամ չորս անգամ կ'իրականացնեն այս յանձնարարութիւնը, բայց աւելի վերջ հայերը կը մերժեն նաեւ կ'անտիլ, որովհետեւ կը հասկնան որ անոնց նպատակը զիրենք Մուսուլ տանիլ չէ, այլ սպաննել է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յօռուածագիրը սապէս եզրակացութեան կը բերէ յօդուածը:

Տիարպաքրի իջեալէ շրջանի մէջ երեւան հանուած ոսկորները կրնան պատկանած ըլլալ տանջանքներու ենթարկուած հայերուն: Անշուշտ որ վերջնական վճիռը պիտի արձակուի Դատական բժշկութեան Մարնին կողմէ գանկերու ու ոսկորներու վրայ կատարելի քննութիւններէն ետք: Բայց որքան որ կը տեսնենք, իջեալի շրջանին մէջ կատարուած ամէն պեղում չարութեան հնագիտութիւն մը պիտի դառնայ:

PUSD DISTRICTING TASK FORCE
Have a Voice, Draw the Boundaries!

Օժանդակեցէ՛ք կառուցելու Փաստաթիմայի Միացեալ Վարժարաններու Մարզի Ընտրութեան

Փաստաթիմի Միացեալ Վարժարաններու Մարզի Օրգանակում Ձեռնարկ կ'ընեն: Աշխարհագրական շրջանակներ, որոնք կարելի պիտի ըլլայ ընտրելու ՓՐԿ նախագահի ընտրութիւնը:

Օրգանակի անդամները կը կարծիք մը արտայայտեն թէ որ զարգացող, բարեկեցիկ ու շրջանակներ զբաղող ընտրելու են, նրաշնչաբեր են: Բարձրագոյնում ամենայն ընտրութիւնը ՓՐԿՆ ընտրութեան համար:

Մասնակցելու ու արժեքներ կատարելու մասնակցելու է:

Համայնքի Երկրի գաղտնի մը ժողովները միայն ու յամենակցի՛ք մը խորհուրդները, կերպարանաբերու ՓՐԿՆ նախագահ:

Ցանցակց ժողովները

- Փետրուար 11, 2012, ստուտեան ժամը 10:00, Jackie Robinson Center, 1020 Fair Oaks Ave., Pasadena.
- Փետրուար 13, 2012, երկուշաբթի ժամը 6:00, Sierra Madre City Hall Chambers, 232 W. Sierra Madre Blvd., Sierra Madre.

Մասնակց տեղեկութիւնները համար: <http://districting-task-force.pasadenatd.org>
Կրկնէ՛ք միայն pasadenatd@pasadenatd.org

Twitter: @pasdataskforce
Facebook: PUSD Taskforce
Հեռախոս: 323-349-0661

ՅԵՔԻԱԹ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ԻՄ ՍԻՐԱԾ ՆԿԱՐՉԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԻՆԷՆԵՍՏՈՎՄԻՍԵԱՆ

Եթե սարերից այն կողմ՝ հեռու ծովերի ու ովկիանոսների լաբիրինթոսում, ապրում է մի նկարիչ: Մովորական մարդ չէ նա, չի կրկնում միլաներին, իւրօրինակ է, անսովոր: Նա շատ է սիրում ընկնել կապոյտ-կապոյտ երազների եւ գոյնգոյն երեւակայութիւնների հարուստ աշխարհը: Իր հօր թեւերով, մտքի մեծ ուժով... Մարդկանց թոււմ է, թէ նա ապրում է իրականութիւնից դուրս, ստեղծել է իր մոլորակը, ապրում է անձիր անսահմանութեան մէջ, իր գաղափարներով՝ գատուած աշխարհից, պարփակուած իր պատեանի մէջ: Բայց այդպէս չէ, հաւատացէք: Նա սիրում է կեանքը, սիրահարուած է բնութեանը, նկատում է երկնքի խորհրդաւորութիւնը, քարի հետեւում թաքնուած թփի, լքուած ծառի, հեռացող տերեւների սոսափիւնը, արբենում է ծաղիկների անուշ բուրմունքով, գարնան փոթորկումով, խենթանում է ծովի ալեկոծութեամբ... Ջրերի անընդմէջ ցայտով: Իսկ ամէնից շատ սիրում է մարդկանց, նրանց բարդ ներաշխարհը, հոգու խաղաղութիւնը եւ անսպառ գանձերը: Եւ գիտէք, այդ ամէնն ինչպէս է երեւում նրա կերտած նկարներում... Կեանքում նկարիչը երբեմն շատ է ինքնամփոփ: Նրա գոյնների գարմանահրաշաշխարհում մարդկային ամենագեղեցիկ զգացմունքներն են, նաեւ մերժելի արատները, գաւեշտները, որոնք կեանքի իրական արտացոլանքն են, այդ նկարներում կայ սպասում, մտորում, մտահոգութիւն եւ վերջապէս զգացմունքների մաքրութիւն եւ անկեղծութիւն: Մի ամբողջ սիմֆոնիա, կոմպոզիցիա, զգացումների փունջ՝ իր իւրայատուկ ոճով ու կենսափիլիսոփայութեամբ: Նրբագոյն գոյնների հեքիաթն այսպէս շարունակուած էր, երբ կեանքի անակնկալ խաչմերուկում հանդիպեց իր նման խենթ բանաստեղծուհուն: Զգուող օրերի շղթան կարծես ընդմիջուեց արեւի մէկ հատիկ շողով, ու լոյս լցուեց նկարչի միայնութեան մէջ, արեան խլրտուք զգաց երակներում: Կեանքի շարժումը փոխուեց, երկրի պտոյտն աւելի շօշափելի ու տեսանելի դարձաւ... Ախր հոգում սառուց էր կարծես, բայց դա այն սառուցը չէ, որ առաջանում է անտարբերութիւնից... Ես շատ լաւ եմ հասկանում իմ նկարչին, այդ սառնութիւնը չզգանաւտուելուց է... Հասկացուելուց, ... ու անաշացել է սառցէ ամուր պատ... Եւ կը լինի հալոցք, հաւատում եմ: Ու կը ջերմանայ նրա ցաւած հոգին... այս պահին արդէն իմ խօսքերից, որ պատրաստուած եմ ասել, որպէսզի մեր այս հեքիաթը սիրոյ եւ բարու յաղթանակով աւարտուի... Իսկ յետոյ՝... յետոյ գուցէ իրականութիւն կը դառնան ոսկէ երազներն ու թաւշէ երեւակայութիւնը:

- Իմ սիրելի նկարիչ, դու երեւի չես գտնում, թէ ինչպէս հեռաւորութիւնից փրկեցիր մի գաղտնի հակի, որի սիրտը բազում ցաւերից տրոփում էր արագ, ան-

հանգիստ: Դու՝ քո գարմանալի լոյսով, երբեմն հատուկեմտ աստուղ բառերով, պարզապէս քո գոյութեամբ: Դու ափէ ափ լոյսով ես լցուած, որի մի փոքրիկ շողը, հազարաւոր քիւմեթրեր կտրելով, հասաւ ու փարուեց ինձ... Ու ես տարօրինակ թրթիւր գգացի... Ուրեմն դեռ կան մարդիկ, որոնք այդպէս ընկալել գիտեն կեանքը, գնահատում են մարդու ինքնութեան իրական արժէքը... դու արուեստագէտի նրբութեամբ ես գտնում այդ ամէնը... ուրեմն ես մենակ չեմ: Այդպիսի մարդիկ ազգութիւն չունեն, նեղ շահերով չեն ապրում, նրանք համամարդկային են, բարձր են, վեհ: Դու յայտնուեցիր, երբ այնքան յուսահատ էի, որ աշխարհն ինձ աւելի մեծ էր թուում, քան կայ իրականում, մի լայնարձակ անսպասու էր կարծես, ուր օազիսի մասին անգամ երազել չէի մտածում:

Դու՝ քո կտանների հրաշագեղ գոյների թափանցիկութեամբ, ինձ յոյս տուեցիր, չետոյ այդ յոյսը փոխուեց հօր ուժի: Քո նուրբ ու խելացնոր գոյներն ինձ դուր եկան... Աւելի յաճախ՝ սեւ եւ սպիտակ՝ երկու գոյն՝ իրար հակադիր, բայց իրար լրացնող ու ներդաշնակ: Սեւ եւ սպիտակ երազների խաղ, կրակոտ պար, մոգական հնթիւնների կանչ: Եւ այդ երկու հակադիր աշխարհների հետեւում քո ինքնատիպ աշխարհն է, իմ նկարիչ, քո փոթորկուող յուզերի չաւերժ ծփացող ովկիանոսը: Քո գոյնգոյն երեւակայութեամբ եւ մատների արտիստական շարժումներով, թեթեւ վրձնահարուածներով շունչ են առնում քո սիրելի կերպարները, դառնում նկարներ: Դրանք հենց տիեզերական այն լարերն են, որոնց մենք փնտրում ենք շարունակ... ինչ-որ հեռու ստուերներում ենք փնտրում, այնինչ մեր մէջ են այդ անտեսանելի լարերը... Ինձ համար դրանք լոյսի պատուհիկներ են, հոգեւոր լոյսի, Քո հոգու լոյսի իմ բաժինը...

Արեւ կայ քո հոգում, սիրելի նկարիչս, դու գգայուն մարդկանց նաեւ այսպէս ես բուժում, իմ բժիշկ բարեկամ: Նաեւ արուեստով... դու... միայն դու կարող ես ինձ համար երկնքից երազներ իջեցնել ու նուիրել այնպէս, ինչպէս ծաղիկների փունջը կը նուիրէիր... Իմ սիրած վարդերի՝ կարմիր, սպիտակ վարդերի փունջը: Դու ներշնչանք ես, ես հիմա աշխարհը տեսնում եմ քո աչքերով... գոյգ աչքեր, որոնք միշտ ինձ հետ են: Ու տեսնում եմ անտեսանելին, անկարելին... քո աչքերի շնորհիւ, ծովի նման կապոյտ աչքերիդ միջոցով: Ես սիրում եմ քո հակասական աշխարհը, նկարիչ: Ու արդէն վաղուց ձուլուել եմ այդ աշխարհին ու նրա մի մասնիկին եմ, անբաժանելի մասնիկը... կարծես վերջ չկայ այդ տարօրինակ զգացողութեանը... Ու չեմ ուզում, որ երբեք հնչի այդ «վերջ բառը... ուստի հեքիաթները շարունակուած են, իմ նկարիչ բարեկամ... ու դրանց մէջ ամենայն վերժականը, ամենագալիին մեր հրաշապատում հեքիաթն է...

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ ՅԱԵՐԺՈՒԹԵԱՆԸ



ԱՆԼԻՏԱ ԴՈՒՌԻՒԱՆՆԵԱՆ

Երբ ձեռքը ես վերցնում եմ Երի Պետրոսեանի կազմած «Գրիգոր Նարեկացու հետ» ստուարածաւալ ու պերճաշուք հանրագիտարանը, առաջին զգացողութիւնը, որ համակում է քեզ՝ հիացմունքն է: Ապա սկսում ես թերթել գրքի էջերը, ծանօթանալ բովանդակութեանը, նկարագրողուններին, ու հիացմունքը շարունակում է ուղեկցել քեզ՝ լուսաւոր երկարատեւ տրամադրութիւն պարգեւելով: Եւ Երի Պետրոսեանը մատենագէտ է, գրադարանային գործի կազմակերպիչ, նաեւ Գրիգոր Նարեկացուն պաշտող: Տարիների ընթացքում հաւաքել է անցեալի, նաեւ մեր օրերի Գրիգոր Նարեկացուն վերաբերող նիւթերը, թէ՛ հայերի եւ թէ՛ օտարների: Այս հանրագիտարանն իր գունեղութեամբ իւրօրինակ ձեւով մեզ պարգեւում է հայ միջնադարի հոգեւոր լոյսը. գրքի բոլոր էջերն անխտիր ունեն հայ մանրանկարչութեան կերտած գեղեցիկ ու գունեղ լուսանցազարդեր: Գիրքը հարուստ է նկարներով. դրանք ընտրուած են հայ արուեստի մեծերի գործերից ու սիրուած են ողջ գրքում՝ խորհրդանշելով, թէ՛ աստուածաշուրթ Գրիգոր Նարեկացու ժողովուրդը որքան ստեղծագործ է ու բարձրաճաշակ: Մերօրեայ բազմաթիւ տաղանդաւոր նկարիչների կողքին կան հայ դասական, նաեւ աշխարհահռչակ նկարիչների գործերը՝ Վարդգէս Սուրէնեանց, Մարտիրոս Սարեան, Յակոբ Կոչոյեան, Գրիգոր Խանճեան, Մինաս Աւետիսեան, Արշիլ Գորկի: Յատկապէս շատ տեղին են օգտագործուած Գրիգոր Խանճեանի «Հայոց այբուբենը» եւ «Վարդանանք» գրքերի նկարները: «Նարեկացու հետ» գրքում գետնուած են ֆոտոնկարներ, նաեւ գեղարուեստական կտանների վերարտադրութիւններ, որոնք ներկայացնում են Հայաստանի վանքերը՝ նաեւ պատմական Հայաստանի, որոնց մեծ մասն այսօր արդէն գոյութիւն չունեն: Եւ Երի Պետրոսեանն աշխատել է իր հանրագիտարանում ի մի բերել բոլոր այն նկարիչների գործերը, որոնք պատկերել են Գրիգոր Նարեկացուն՝ սկսած հանճարեղ բանաստեղծի առաջին մանրանկարից, որի հեղինակը Գրիգոր Սկեւոսցին է (1173 թ.), մինչեւ մեր օրերի վաղամեծիկ տաղանդաւոր նկարչուհի Մինա Անանեանի Գրիգոր Նարեկացի նկարը:

11-րդ դարից սկսած Գրիգոր Նարեկացին իր քերթուածներով՝ յատկապէս «Մատենանոց գրքերգութեան» հանճարեղ երկով, դարձել է հայերի հոգեւոր կեանքի ուղեկիցը: Այս իրողութեան ընկալումը լիովին դրսեւորուած է «Նարեկացու հետ» ժողովածուում: Նրանում հատուած ներկան անցեալի եւ մեր օրերի առաջնակարգ նարեկացիա-

գէտների հետազոտութիւններից ու մեկնաբանութիւններից, նաեւ յօդուածներ կան ոչ մասնագէտների Նարեկացուն տուած գնահատականներից, որոնցում երեւում է վերջիններիս սէրը դէպի Գրիգոր Նարեկացին ու նրանց ձգտումը հայ մեծագոյն բանաստեղծի հոգեւոր աշխարհի հետ սեփական շփումն ունենալու կամ պարզապէս իրենց ընկալման զգայական եւ մտաւոր հանրագումար ներկայացնելու:

Անշուշտ Եւրի Պետրոսեանը չէր կարող ընդգրկել Գրիգոր Նարեկացուն տուած գնահատականների ամբողջութիւնը. դա կը պահանջէր եւս մի քանի հատոր, սակայն այն տեսքով, ինչով գիրքն այսօր ներկայանում է ընթերցողին, լիովին բաւարար է Գրիգոր Նարեկացուն առաւել մօտեցնելու մեր այսօրուայ, ցաւօք, երբեմն աստուածաշնչային պատուիրաններից, նարեկեան պատգամներից բաւականին հեռացած հայրենակիցներին:

Եւրի Պետրոսեանի գրքում առանձին բաժիններ կան, որոնք ներկայացնում են Գրիգոր Նարեկացու կրական ժառանգութեան եւ նրա կատարած դերի այլազան կողմերը: Շատ կարեւոր է, որ գրքում թուարկուած են «Մատենանոց գրքերգութեան» պոէմի հայերէն աշխարհաբար ու այլալեզու թարգմանիչները, հանճարեղ բանաստեղծի գլուխ գործոցի կազմողներ Պօղոս Խաչատրեանն ու Արշալոյս Ղազինեանը: Յայտնի է, որ Գր. Նարեկացու Մատենանի ու տաղերի ռուսերէն թարգմանութեան ինդրում մեծագոյն ծառայութիւն է մատուցել Լեւոն Մկրտչեանը: Իր փոքրիկ, սակայն խօսուն գրքոյկը վկայում է, թէ ռուսերէն թարգմանուած Նարեկացին ինչպիսի հիացմունք է առաջացրել նախկին Խորհրդային Միութեան գրողների ու մտաւորականների շրջանում: Պատահական չէ, որ Չինգիզ Այթմաթ մատովն իր «Եւ դարից երկար տեւում է օրը» վէպը սկսել է Գր. Նարեկացու քաղած բնաբանով:

Եւրի Պետրոսեանը Գր. Նարեկացու կողքին դրել է մեր մեծերին՝ որպէս հանճարի գործի շարունակողներ՝ Մ. Նալբանդեան, Հ. Թումանեան, Ա. Խահակեան, Վ. Տէրեան, Մ. Մեծարեան, Սիւսանթո, Արշ. Զօպանեան, Ակ. Բակուց, Ե. Զարեան, Յ. Շիրազ, Պ. Սեւակ, Կոմիտաս, Հ. Սահեան: Շատ մարգարէական է հնչում Ուրիլիամ Մարոյեանի ասոյթը Գրիգոր Նարեկացու մասին. «Օր մը ամբողջ աշխարհ քիչ-շատ պիտի Նարեկին ճանչնայ...»:

Միջնադարեան բազմաթիւ ձեռագիր ընդօրինակութիւնների կողքին 17-րդ դարի երկրորդ կէսին հայ տպագրութեան երախտաւորներից՝ Ոսկան Երեւանցին Մարտիկոսի «Ստեղծութեան» Նրանում հատուած ներկան անցեալի եւ մեր օրերի առաջնակարգ նարեկացիա-



ԲԵՅԻՍՏՈՒՆԻ ՔԱՐԵՂԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Մինչև Արմինա-Ուրարտու Հայոց սրբազան Լեոնաշխարհ գնալը, վառուելու համար այնտեղ պայթած հրաբուխների լոյսով, իջնելու նրանց լոյսից ծիրանի կապած Բզնունեաց ծովի ջրեր վահագնի ծնունդը սունամբելու, Աշտիշատի լուսոտ մեհանների առաջ նաևսարդ սունամբելու, դիտելու Մեծ Մհեր-Միհրի Քարկիկ Ջալալիի ջրից ժայթքած թռիչքը, գնանք արեւելքի Արանների Արքայ Տիգրան «Եօթանասուն Հովիտներ»ի աշխարհ, որին երբեք չէր զիջել Պարթևեաց: Այնտեղի Արտագու գաւառում գետ է հոսում, մութ են նրա ջրերը, «Տղմուտ» էին, գնում ծաղկունքով պնդած դաշտի միջով, անցնում Բեհիստուն բնակավայրի լեռների կիրճերով: Միջին էին նրա ջրերը, կռուի դաշտում վարդանն էր ընկել, այնտեղ հոսած քաջերի արիւնն էր տանում հեռու դաշտեր: Կարմիր շուշաններով էր արեւում դաշտը, «Վասն հաւատքի, վասն հայրենեաց» մարտում ընկած արմին-հայց քաջերի հրաբորբ սրտերից հոսած վառ արիւնով յառնած «Շուշաններն» էին, մեղմիկ հովիկներից օրօրում, կարծես թշնամու դէմ մարտի գնալու քաջերն էին: Բեհիստունի կիրճ, նրա բարձրաբերձ ժայռեղէն դէմքն էին նրբատաշել: Նայիր նրան երեսին, երեք տարբեր սիւնակներով նշանների բազում տողեր են ներքեւ իջնում: Այնտեղ է քու Արմինա-Հայաստանի ազատասէր արմին-հայցերի մ.թ.ա. 521 թուականի ապստամբութեան ընդգրկմը օտար տիրող» դէմ: Այնտեղ է քու Նահապետ Հայկի սերունդից, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքայ դարձած, Արմինայի «Արա-արեան» իշխանի Արախա անունով խալտի-դայի որդիի միաժամանակուայ ապստամբութիւնը նոյն տիրողի դէմ: Երկու ճակատներով ազատութեան դրօշ պարգած «Արմին» հայերն են այնտեղ, այնտեղից է վառում լոյսը քու Արմինա-Արմինների, այնտեղ է «մեռնում» քու լեոնաշխարհից հեռուներ գացած հնդեւրոպացի ցեղակիցների կեղծիքը «Ուրարտու» երկիրի «Ուրարտացիներ»

րի» մասին: Մեռաւ արմին-հայցերի հոգիներում իրենց Հայկ-խալտի աստուծոյ ընդգրկման ոգին, նրանց «Ասացին հնազանդի տիրողը», երկար դարեր տիրողը հնազանդուելու համար «մեռաւ» արմին-հայցը, հանգաւ կրակը իրենց լեոնաշխարհում, հրաբուխները լեցին, իրենց ծովին «ծիրանի» չիջաւ, ատրուշանների մոխիրը քամին տարաւ: Երկար ժամանակ կարծել էին, որ ժայռի երեսի նշանագրերը իրենց համար անհասկնալի ինչ որ մեհանական նշաններ լինէին: Վերջապէս կարողացել էին ընթերցել այդ նշանները: Պարսիկների երկրում, Արմինեանների գերդաստանից Դարեհ Բ. անունով, աշխարհակալ հօր արքայ էր թագաւորել: Արեւելքի արքաները, քարերին կամ թրծուած կաւէ աղիւսների վրայ գրել էին իրենց նուաճումների, քաջ գործերի մասին, այն դարերին տանելու համար: Դարեհ արքան հրամայել էր սրբատաշել ժայռի երեսը, նրա վրայ գրէին իր քաջ գործերի մասին: Իրարու համագործ, ուղղակի իրարու թարգմանութիւնը հանդիսացող, երեք տարբեր լեզուների շարադրանքով սեպագիր գրերով արձանագրութիւնն էր: Պարսկաստանի դէմ ապստամբած երկրների շարքում յիշատակուել է նաեւ Արմինա-Հայաստանը: Պարսկերէն տարբերակում այն կոչուել է Արմինա (Արմինիա), էլամերէն՝ Հարմինուա, Աքքատերէն Ուրաշտու: Արձանագրուած է նաեւ այնտեղ իր բանակների մղած հինգ ճակատամարտերի մասին: Պատմաբանները հաստատում են, որ այդ Ուրաշտուն Ուրարտուն է: Այդ արձանագրութիւնը գրուել է մ.թ.ա. 520 թուականին, Արմինա-Ուրարտուի 590-585 թուականի անկումից 70 տարիներ յետոյ: Այդ ինչպէս էր, որ Դարեհը «Արմինա» էր կոչել մայրենի Աքքատերէն լեզուի գրուածքով այն նոյն թարգմանաբար (Ուրուաշտու-Ուրարտու» կոչուած երկիրը: «Արմինա» անունը նոր էր տրուել «Ուրարտու» երկրին: Եթէ «Ուրարտու» Արմինա չէր եղել, ապա այդ եօթանասուն տարիների ընթացքում Արմինները արշաւած պիտի լինէին, ողողած

պիտի լինէին այդ երկիրը, տիրած նրա գահին, այն կոչած իրենց անունով՝ Արմինա, պատճառ հանդիսանալով Դարեհին այդպէս անուանելու այն: Պատմական այդքան կարճ ժամանակարկացքում անհնար էր իրականացնել այդ, նման ներխուժում էլ չիշատակուած չէր եղել պատմիչների կողմից: Յոյն իմաստուններ, պատմիչներ աշխարհագրական այդ վայրերում երբեք չեն յիշատակել «Ուրաշտու» «Ուրարտու» անունով երկիր, երբեք, իսկ արմինների եւ Արմինիայի մասին նրանց իմաստունների մատեաններում բազում գրաւոր խօսքեր: Մարերի երկիր, հօր Մարաստանը, գործակցած իշխանութիւնից դժգոհ Նաիրեան որոշ ցեղերի հետ, պատերազմ են սանձագրծել Արմինա-Ուրարտուի դէմ, մ.թ.ա. 590-585 թուականին տապալել Արամ-Արամէի տան թագաւորական հարստութեան վերջին արքայ Ռուսա Գ.ին: Արմինա-Ուրարտուի նոյն տարածքի վրայ, մ.թ.ա. 558 թուականին հաստատուել է նոյն երկրի իշխաններից Երուանդի՝ Երուանդունիների, թագաւորական մի այլ հարստութիւնը: Թագաւորական նոր իշխանութեան հաստատումով, երկրի անուան փոփոխութեան պատճառ չէր կարող հանդիսանալ: Նոր գահատոհմի իշխանութիւնը նախ գտնուել էր Մարաստանի, ապա Աքքամեանների տիրապետութեան տակ, այդ նաեւ պատճառ չէր կարող հանդիսանալ երկրի անունն փոփոխութեանը: Բաբելոնը նուաճել էր Ասորեստա-

նը, սակայն այն չէր դադարել Բաբելոն կոչուելուց: Ասորեստանին տիրել էին պարսիկները, այն Պարսկաստան չէ կոչուել: Եթէ այդ միջանկեալ տարիների ընթացքում երկրում նոր ժողովուրդի ներխուժում կատարուած լինէր, եթէ Ուրարտական հարստութեան տեղ, երկրում արդէն այդ ժողովուրդի իշխանութեան նոր հարստութիւն հիմնուած լինէր, մի քանի տասնամեակի ընթացքում նրա դարաւոր անունը փոխուած չէր կարող լինել: Ուրարտու կոչուած երկիրը, Արմինա-Արմինա-ն էր, երկիրը Արմինների երկիրն էր, նրան կոչել էին հոմանիշ անուններով՝ Հարմինուա, Ուրաշտու (Ուրարտու), («աշ»-»ար»), «շ»«ւ»«ր» տառերի լեզուական հնչիւնափոխական տարբերութեան անուններով: Հիմա էլ կան նոյն երկրներ, որոնց կոչում են հոմանիշ տարբեր անուններով: «Ուրարտու» ներխուժած, փոքրամասնութիւն եղող Արմինները եթէ զաւթած լինէին իշխանութիւնը, «Ուրարտացի»ները թշնամական յարաբերութեան մէջ պիտի լինէին նրանց հետ: Հետեւաբար, Դարեհի բանակների Արմինա ներխուժման ժամանակ, նրանք պարսիկների կողմը պիտի լինէին: Նման երեւոյթ չէր պատահել, Արմինա-Ուրարտուի ամբողջ ժողովուրդն էր միասնաբար ապստամբել Դարեհի, նրան արմին-հայ գորավար՝ Դադարշիշի, դեկավարութեամբ երկիր ներխուժած պարսկական զօրքի դէմ: (Շարունակելի)

ՍԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

30 Յունուարի 2012թ. Արդէն աւանդաբար, Լոս Անճելոսում ներկայացուած օտարերկրեայ դիւանագէտների ամենամեայ հաւաքը կազմակերպուած է ԼԱ-ում ՀՀ զլխաւոր հիւպատոսութեան յարկի տակ: Այս տարի հաւաքին մասնակցել են մօտ հինգ տասնեակ երկիր ներկայացնող դիւանագէտներ: Նրանք քննարկել են յառաջիկայ տարուայ անելիքները. գործակցութեան հնարաւոր եզրերն ու ընդհանուր անելիքները՝ կապուած Լոս Անճելոսում ապրող բազմազգ բնակիչների մշակութային երկխօսութեան զարգացումը խթանող ծրագրերի հետ: Հիւպատոսական հերթական հաւաքի պատուաւոր հիւրը ԱՄՆ նաւատորմի նախկին հրամանատար Փոլ Իգնատիուսն էր: Անմիջական միջնորդութեամբ, նա օտարերկրեայ դիւանագէտների հետ խօսեց աշխարհաքաղաքական նախկին եւ ներկայ իրողութիւններին առնչուող թեմաների մասին: Դիւանագիտական համայնքի մասնակիցները ողջունեցին Լոս Անճելոսում դիւանագիտական աշխատանքի անցած նոր գործընկերներին՝ Մալազիայի, Թուրքիայի եւ Ճապոնիայի զլխաւոր հիւպատոսներին, ովքեր հաւատարմագրուեցին ԼԱ հիւպատոսական կորպուսում:

«ՔԱՋ ՆԱԶԱՐ»
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30

Կլէմտէյլի 380-րդ կայանից

ST. GREGORY ARMENIAN CHURCH
Geragos BANQUET HALL OF PASADENA
NEWLY REMODELED

Now ready to host your

- Wedding
- Baptism
- Anniversaries
- All other happy & sad events.
- հարսանիք
- Սկրտութիւն
- Տարեդարձ
- և ամէն ուրախ ու տխուր առիթներ:

ՎԱՏԷ 562-715-8730 VAHE

Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք

ԴՈՒՆ ԱՆՁՈՒՄՊ ԵՒ ԱՆՇՐՋԱՎՅԵԱ՞Ց ԱՆՁ ՍԸՆ ԵՍ...

Անգուստ վերաբերմունքը շատ մը մարդոց համար կրնայ տհաճ ըլլալ, որովհետեւ կարգ մը մարդիկ անսանձ եւ խոհեմ կնոջ կը նային որպէս չափազանց արկածախնդրասէր, հարց մը՝ որ ժխտական ձեւով կ'ազդէ անոր ընտրութիւններու առողջութեան եւ որոշումներու ճշգրտագնութեան վրայ: Անշրջահայեաց կիներ երկարօրէն չի մտածեր եւ չի խորանար իր կատարելիք հարցերուն մէջ, այլ ան կը հետեւի իր բնագոյններուն, կը վստահի իր նախագրու շարժումներուն եւ չի տատամսիր որեւէ որոշում առնելու՝ որքան ալ դժուար ըլլայ այդ:

Սակայն անշրջահայեացութիւնը առաւելութիւններ ունի նաեւ, եթէ այդ կայացած է մտքի եւ մղումի ուժի հաւասարակշռութեան միջոց: Հաճելի չէ մարդ չափազանցօրէն մտածէ եւ մտահոգուի որեւէ որոշում առնելէ առաջ, որովհետեւ այդ իրեն կ'առաջնորդէ իջնալու տատամսումի եւ շփոթի թակարդին մէջ եւ հետեւաբար, կ'արգիլէ զինք վայելելու թէկուզ փոքր չափով անսանձութիւն պահանջող բազմաթիւ հարցեր:

Ճիշդն է կարողանալ հաւասարակշռութիւն իրագործել ուղեղի կշռոյթին եւ մղումի զգացումին միջոց: Համարձակ եւ արկածախնդրութիւնը սիրող եղիւր, որովհետեւ այս յատկութիւնները կեանքիդ վրայ կ'աւելցնեն շքեղութիւն, սակայն անսանձ մի ըլլար եւ շատ մի աճապարեք որոշումներդ առնելու մէջ:

Բնաւ պատահած է, որ մէկը քեզի անուանած է որպէս անգուստ անձ: Արդեօք դուն զգայուն եւ լո՞ւրջ ազդիկ մըն ես թէ փոփոխամիտ եւ անարժէք: Կը սիրե՞ս արկածախնդրութիւնը եւ անոր ընկերակցող անգուստութիւնը կամ աւելի հակում ունիս խոհեմութեան եւ հաւասարակշռութեան քու բոլոր որոշումներդ մէջ:

1. Եթէ որոշես միանալ դասընթացներու, ո՞ր նիւթը մեծ հաւանականութիւն ունիս ընտրելու:

Ա) Արուեստի վերաբերեալ դասեր, ինչպէս օրինակ գծագրութեան դասերու: (0)

Բ) Գործնական դասեր, ինչպէս ինքզինք կառավարելու միջոցներ: (1)

Գ) Կռուելու արուեստի դասեր: (3)

2. Եթէ ինքզինքդ գտնես հեռուոր կղզիի մը վրայ առանձին, ինչպիսի՞ տղամարդ մը կը նախընտրես ըլլայ քու հաւատարիմ ծառայող:

Ա) Գործնական երիտասարդ մը, որ գիտէ ինչպէս ուտելիք պիտի ապահովէ եւ ապաստան հիմնէ, սակայն դժբախտաբար հրապուրիչ անձ մըն է: (1)

Բ) Գեղարդէմ եւ կախարդիչ երիտասարդ մը, որուն ընկերակցութիւնը շատ հաճելի է, սակայն իր առաւելութիւնները չեն թեւակոխեր իր արտաքին գեղեցիկ երեւոյթը: (2)

Գ) Չափազանց հրապուրիչ երիտասարդ մը, որ կը վայելէ մարմնային հզօր կազմ, սակայն անօգուտ է երբ հարցը կը վերաբերի ողջ մնալու համար թեքնիքներ հնարելու: (3)

3. Գործատեղին օրէնք եղած է

շաբթուան մէջ մէկ օրը պաշտօնեաները ազատ են հագուելու իրենց նախասիրած հագուստը եւ ստիպուած չեն հագնելու սովորական տարազը: Ի՞նչ կ'ընես.

Ա) Կը հագնիս գործի սովորական տարազը: (1)

Բ) Կը հագնիս մարզանքի յատուկ տաբատ մը եւ հին պլուզ մը: (3)

Գ) Սերտուած բայց ոչ պաշտօնական հագուստ մը կը հագնիս: (2)

4. Կը մտադրես ֆիլմ մը վարձել եւ գիշերով առանձին դիտել զայն: Ի՞նչ տեսակ ֆիլմ հաւանական է որ ընտրես.

Ա) Ռոմանթիք ֆիլմ մը: (1)

Բ) Զուարճալի ֆիլմ մը: (2)

Գ) Վախազդու ֆիլմ մը: (3)

5. Դուն եւ բարեկամուհիդ տեղ ապահոված էք օտար երկրի մէջ միանաբար արձակուրդ անցընելու, սակայն ան վերջին վայրկեանին կը ստիպուի չճամբորդել: Այս կը նշանակէ թէ.

Ա) Դուն առանձին պիտի երթաս եւ հոյակապ ժամանակ անցընես: (3)

Բ) Ուրիշ բարեկամուհի կը փնտռես քեզի ընկերակցելու համար: (2)

Գ) Դուն ալ նոյնպէս չեղեալ կը նկատես ճամբորդութիւնը: (1)

6. Դուն խրախճանքի մը ներկայ ես երբ ներկաները կը սկսին անքթոտներ պատմել: Երբ կարգդ կու գայ հատ մը պատմելու, ի՞նչ կ'ընես.

Ա) Կը խոստովանիս, որ բնաւ անքթոտ չես գիտեր: (0)

Բ) Դպրոցական օրերէն միտքդ մնացած անքթոտ մը կը պատմես: (1)

Գ) Բաւական համարձակ անքթոտ մը կը պատմես: (3)

7. Եթէ աւելորդ ժամանակ ունիս եւ որոշեցիր նաւարկել համացանցի ալիքներուն վրայ, ի՞նչ կ'ընես.

Ա) Կը գնես քու փափաքած ձայնապնակը: (1)

Բ) Քու արձակուրդիդ ընթացքին այցելելիք վայրերուն մասին տեղեկութիւններ կը փորձես գտնել: (2)

Գ) Օտարներու հետ խօսակցելու համացանցային յատուկ սենեակ մը մուտք կը գործես: (3)

8. Քաղաքին մէջ նոր ճաշարանի մը բացումը կը կատարուի եւ դուն քու բարեկամներդ հետ հոն կ'այցելես: Ցանկիս վրայէն ի՞նչ ճաշատեսակ կ'ընտրես.

Ա) Քու բարեկամուհիդ ընտրած միեւնոյն ճաշատեսակը: (1)

Բ) Ցանկիս վրայ ամէնէն տարօրինակ ճաշատեսակը: (3)

Գ) Մեզի վարժութիւն եղած ճաշատեսակը: (2)

9. Կ'որոշես խոհանոցիդ պատերը ներկել տալ, ո՞ր գոյնիս վրայ ընտրութիւնդ կը յանգի.

Ա) Աչքառու գոյն մը, ինչպէս կարմիր կամ կապոյտ: (3)

Բ) Բաց գոյն մը, որ կը յարմարի քու բնաւորութեանդ հետ: (2)

Գ) Թեթեւ գոյն մը, որուն մաքրութիւնը պահպանելը հեշտ է: (1)

10. Պաշտօնակիցդ կը փնտռէ bungee jump կատարող կամաւորներ, մասնակցելու համար գործունէութեան մը, որուն շահը պիտի տրամադրուի բարեգործական հաս-

ՍԵՌԱՅԻՆ ԶԱՐՑԵՐՈՒ ԲԺՇԿԻ ԴԻՍԵԼԸ Ե՞ՐԲ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Նոյնիսկ եթէ անոնք կը յարաբերին իրար հետ, կարգ մը ամոլներու սեռային կեանքը կրնայ որոշ խանգարումներու հանդիպիլ, ինչ որ կրնայ իրենց առօրեայ կեանքին վրայ ալ ազդել: Այդպիսի դժուար պարագաներու ընթացքին սեռային հարցերու բժշկի դիմելը լաւագոյն լուծումը կը հանդիսանայ: Իսկ բուժման նպատակը կ'ըլլայ գոյգերուն առիթ տալ սեռային առողջ եւ գուարճալի կեանք մը ապրելու: Սակայն ե՞րբ պէտք է դիմենք բուժման. ինչպէ՞ս կրնայ ըլլալ այդ եւ ո՞վ է այդ հարցերով զբաղող բժիշկը:

Ինչպէս յայտնի է, սեռային կայունութիւնը գլխաւոր գործօն մըն է ամոլներու հաւասարակշռութեան: Այս գծով մասնագէտ բժիշկներ կ'ըսեն, թէ սեռային առողջութիւնը հոգեկան եւ մարմնային վայելքէն բաժին մըն է եւ բուժումը կը համարուի իտէալագոյն միջոցը այն անձերուն համար, որոնք կը փափաքին ձերբազատուիլ հոգեկան կամ մարմնային բնոյթ ունեցող խանգարումներէ, որոնք կրնան խոչընդոտել ամոլի մը յարաբերութիւնը:

Այս խանգարումները կը բաժնուին երեք մասերու. օրկանական (ինչպէս հորմոններու մէջ պակաս կամ անոնց կազմուածքին մէջ թերութիւն), հոգեկան (սեռային վատ մօտեցում), ինչ որ սխալ գաղափար կազմել տուած կ'ըլլայ սեռային գործողութեան մասին, կամ յարաբերութեան կամ ամոլներուն միջեւ խանգարում (բախումներ, որոնք առօրեայ կեանքին մէջ չեն երեւնար, այլ սեռային յարաբերութեան մէջ կ'արտացոլան):

Իրականութեան մէջ սեռային հարցին բժիշկ առանձնապէս գոյութիւն չունի, այլ ընդհանրապէս ան կրնայ ըլլալ ընդհանուր բժշկութեան, կնկաբուժութեան կամ գեղձերու բժշկութեան մասնագէտ մը: Անոնցմէ մի քանի նաեւ բժիշկներ չեն, այլ հոգեբաններ:

Երբ հիւանդ մը կը դիմէ որեւէ մասնագիտութեամբ հոգեբանի, այս այցելութեան նպատակը կ'ըլլայ իր ունեցած հարցին

դրդապատճառները յայտնաբերել: Հետեւաբար, անոնց առաջին երկու հանդիպումները կ'ըլլան տղամարդուն կամ կնկան անձնական կեանքին վերաբերեալ հարցումներ հարցնել, մտնելով բազմաթիւ մանրամասնութիւններու մէջ, ինչպէս օրինակի համար սեռային առաջին փորձառութիւններուն մասին արծարծել: Անոնք կը խօսակցին իրենց մարմիններուն մասին իրենց ունեցած տեղեկութիւններուն մասին եւ ի՞նչ է իրենց հասկացողութիւնը յաջող յարաբերութեան մասին, ինչպէս նաեւ ընտանեկան ու դաստիարակչական կեանքին մասին, որոնց հիման վրայ անած են, նկատի ունենալով նաեւ եղբայր/քոյրերու, ընտանիքի եւ բարեկամներու հետ յարաբերութիւնները: Այս հարցադրումներուն մէջ տեղ կը գտնեն հետեւեալ հարցումները. սեռային այս ախտանշանը նո՞ր է թէ քրօնիկ, հարցը մէ՞կ ընկերակիցի հետ է թէ բոլորին հետ: Այս հարցումներուն կողքին պէտք է մոռնալ նաեւ բուժման պահանջքին պատճառները եւ ամոլներուն ակնկալիքը: Կը հարցուի նաեւ ամոլներու իրար ծանօթացման ձեւը եւ իրենց միացեալ ընկերային յարաբերութիւնները: Նկատի կ'առնուին անոնց մօտ ֆիզիքական հարցերու գոյութիւնը եւ օգտագործուած դեղերը: Ի միջի այլոց հարցումներու շարքին կ'անցնի կնկան ծննդաբերութեան ձեւերը:

Այս բոլոր տեղեկութիւնները փոխանցելու համար հարկ է վստահութիւն ունենան բժիշկին վրայ եւ պատրաստակամութիւն ունենան անհատական նիւթերու մասին սրտբաց խօսելու: Կրնայ ըլլալ գոյգերը սկիզբը տատամսին իրենց զգայուն կէտերը բացի տալու, բայց աստիճանաբար բառերը դիւրութեամբ դուրս կու գան: Այս հանդիպումներուն ընթացքին տղամարդն ու կինը հարցեր կը յայտնաբերեն իւրաքանչիւրին մանկութեան մասին, այսպիսով անոնց ունեցած լարուածութիւնները երեւան կու գան: Երբեմն բաւարար է հարցին մասին միայն խօսիլ անգամ եւ այդ մէկը կէս լուծուած կ'ըլլայ:

տատուութեան մը: Արդեօք անունդ կ'արձանագրե՞ս մասնակցողներու ցանկին վրայ.

Ա) Այո, առաջին կամաւորներէն պիտի ըլլաս: (3)

Բ) Համաձայն կը գտնուիս միայն՝ երբ բարեկամներդ շատ քաջալերանք տրամադրեն եւ նեցուկ կանգնին քեզի: (2)

Գ) Ոչ, բայց դուն քու կարգիդ ուրիշներու լուր կու տաս եւ անոնք կ'որոշեն իրենց մասնակցութիւնը բերել: (1)

ԱՐԴԻԻՆՔՆԵՐ.

* Եթէ հաւաքած ես 8-էն 15-ի միջեւ կէտեր.- Դուն շատ զգայուն եւ միտքով հաւասարակշռուած անձ մըն ես, թէեւ երբեմն քիչ մը կը չափազանցես: Քիչ մը աւելի կարեւորութիւն տուր քու բնագոյններդ եւ դադարիր զգացումներդ հետ կռուելէ: Պէտք չկայ յարատեւօրէն խոհեմ եւ շրջահայեաց ըլլալու: Անգուստօրէն վարուիլ երբ այդպէս վարուելու փափաքը ունենաս, մինչեւ այն ատեն որ այս վերաբեր-

մունքդ կը յարմարի պարագային հետ:

* Եթէ հաւաքած ես 16-էն 23-ի միջեւ կէտեր.- Գրեթէ բոլոր ժամանակներուն կը վարուիս պատասխանատու եւ զգայուն ձեւով, սակայն հազուադէպ պարագաներու ընթացքին կը փորձես թոյլնալ եւ որոշ չափով անսանձօրէն կը վարուիս: Մինչեւ այն ատեն որ կը պահես այս հաւասարակշռութիւնը քու վարուելակերպիդ մէջ, պէտք չկայ մտածելու որեւէ փոփոխութիւն կատարել քու բնաւորութեանդ մէջ:

* Եթէ հաւաքած ես 24-էն 30-ի միջեւ կէտեր.- Դուն անշրջահայեաց եւ անգուստ կին մըն ես: Ինչպէս յայտնի է, թէ դուն կը վարուիս առանց լաւապէս մտածելու անոնց մասին: Պէտք է սորվիս ինչպէս պակսեցնել քու արագութեանդ: Երբ այսպէս մղումով եւ անսանձօրէն վարուիս, ինքզինքդ կը գտնես առնելով որոշումներ, որոնց համար յետագային կրնաս զղջալ:

ՆՈՒՊԱՐ ՄԽՍԻԳԵՈՐԳԵԱՆ

Հանգուցեալ Նուպարը կը սերէր աւանդապահ ընտանիքէ: Զաւակն է ազգասէր, հայրենասէր ծնողներու, որոնցմէ ժառանգած է ազգին ու հայրենիքին օտակար դառնալու անսակարկ ոգին եւ կառչած մնացած է անոր իր կեանքին մինչեւ վերջին շունչը:



Լուսահոգին իր ձեռքը միշտ գրպանին մէջ, կը նուիրէ անկաշկանդ հայ միութենական, հայրենակցական եւ ուսումնական հիմնարկներու:

Պէյլանի հայրենակցական միութեան կարկառուն անդամներէն էր ան երկար տարիներ:

Ամէն մարդ գիտէ եւ կը հնահատէ այն իշխանական նուիրատուները՝ 100,000 տոլարի (գումարը) զոր ստացաւ ԹՄՄ-ի Արշակ Տիգրանեան վարժարանը, որ իր մանկապարտէզը վերակոչեց «Տոքթորներ Նուպար եւ Տիգրանուհի Մխիգեորգեան Մանկապարտէզ» անունով:

Արդարեւ, իմ գրութեան մէջ քիչ առաջ յայտնեցի հանգուցեալին աւանդական ընտանիքէ մը սերած ըլլալու հանգամանքը: Ու հիմա թող թող արուի ինծի ցցուն, խիստ ազդու կենդանի օրինակով մը ապացուցանել յայտնուած միտքը:

Հայաստանի մէջ ուսումնառութեան աւարտին, տուն վերադարձի ճամբուն վրայ կանգ կ'առնեն Մոսկուայի մէջ եւ կ'որոշեն ամուսնանալ:

Ու կը կնքեն քաղաքական ամուսնութիւն 4 հարսնետոբներով:

Կ'անցնին տարիներ, երկրէ երկիր քաղաքական անախորժ հոսանքներ կը յաջորդեն իրարու: Հայոց գլխուն կը պայթի նոր գաղթականութիւն մը:

Սանճագ՝ տունով-տեղով եւ բնակչութեամբ կը յանձնուին թրքական իշխանութեան ղեկավարման եւ տեղուցն բնակչութիւնը ակամտեա կը դառնայ թրքական բանակի մուտքին Սանճագ: Հոն հաստատուած հայ բնակչութիւնը տեղի ունեցած էր:

Հուլիսը կ'առնէ ցուպը ի ձեռին անգամ մը եւս: Ու կը գաղթեն հոս ու հոն, աշխարհի չորս կողմերը:

Կ'անցնին տարիներ, երկար տարիներ, եւ հուսկ ապա, Մխիգեորգեան ամուր կը հաստատուին Ամերիկա, Լոս Անճելըսի մէջ:

Շատ չանցած տէր կը դառնան տուն-տեղի, այլ մանաւանդ սեփականատէր՝ էլ Ատոպէ հանրայայտ ղեկավարներ, որ կառուցուած է երկու բանուկ պողոտաներու խաչմերուկին վրայ:

Սակայն անտրամադիր են, շատ ուրախ չեն թուիր ըլլալ: Ներաշխարհը տանջող մշտապէս ցաւի մը առկայութիւնը կ'անհանգստացնէր նորայայտ ամուրը:

Աւանդապահ ընտանիքէ մը ներս հասակ առած մէկու մը համար դիւրին չէ հաշտուիլ քաղաքային ամուսնութեան գաղափարին հետ, կը տարուի մէկը մտածելու:

Օր մը, բարեկամներու հետ խօսակցութեան ատեն բարեկամ մը դրաւ նիւթը սեղանին վրայ, խիստ փափկնակատօրէն:

Հանգուցեալ Նուպարի վերջնական որոշումը այն կ'ըլլայ, որ անպայքան կ'ուզեն երթալ ծննդավար՝ Պէյլան (Սանճագ) եւ Նուպարին սուրբ պսակի արարողութիւնը կատարեն այն եկեղեցիին մէջ, ուր հանգուցեալին ծննդեան մկրտութիւնը տեղի ունեցած էր:

ՓՈՒՆՋ ՄԸ ՆՈՒՊԱՐ ՄԽՍԻԳԵՈՐԳԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՏԱՆԵԿԱՆ ԱՆՁԱՌՈՒՄ ՅՈՒՇԵՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴԱԿԻՇԵԱՆ

Գրըրգիսանի (Սանճագ) Ազգային վարժարանին մէջ մանկապարտէզի բաժնի երախաներէն ենք, եւ շատ կը սիրեն մեր դպրոցը:

Ուսուցչուհիներն են Տիկ. Զարմինէ, Օրդ. գուարթ եւ այլ երեք նուրբաներ անկրկնելի այս ապստղային ծառայող:

Ամէն առտու կը հանդիպինք իրարու Նուպարին հետ համանուն այս թաղամասի անկիւնը եւ ձեռք-ձեռքի տուած հետիոտն կը բռնեն դպրոցի ճամբան:

Կը խօսինք երէկ իրիկուան մեր տուները այցելութեան եկած հիւրերուն մասին, որոնց գաւակները կը յաճախեն միւսուցն վարժարանը:

Մենք երկուքով կ'անդրադառնանք ծնողաց կողմէ արծարծուած, մեզ հետաքրքրող ամենէն կարեւոր նիւթին, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ կարգապահութիւնը:

Այդ օր ծեծ կերած աշակերտները կը դառնային մեր ճամբու կարեւոր նիւթը:

Գաւազանին հաստ թէ բարակ ըլլալը կը զբաղեցնէր մեր միտքը: Նուպարը քովէս կը մտմտար, «լաւ եղաւ անոր, չարին մէկն էր: Թող ուտէ գաւազանը»:

Ու ապա, կարգը կու գար ճամբու ընթացքին, մեր մամաներուն մեզի համար լեցուցած լաթէ տոպրակներուն՝ մեր կունակին վրայ: Քիչ մը ունեւոր երախաները կը կրէին կաշի շինուած գեղեցիկ պայուսակներ:

Դպրոց չհասած կը բանանք լաթէ տոպրակները եւ պայուսակները ու կը լեցնենք մեր գրպանները չամիչ ընկոյզով:

Հանգուցեալ Նուպարը ունեւոր ընտանիքի գաւակ էր:

Հայրը՝ Նազարէթ աղան, տէրն էր կօշիկի ընդարձակ աշխատանոցի մը ցուցադրական մասնաբաժիններով՝ հաստատուած շուկայի ամենէն բանուկ անկիւնը:

Ատեն ատեն կու տայի այցելութիւն հաշխատանոց բարեկերտ համար հայ Մխիգեորգեանը, ու նաեւ տեսնելու մեծ եղբայրս, որ հոն կ'աշխատէր: Զրբախութիւն կ'ընէր:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը 100 տոլար կը նուիրէ անոր բարգաւաճման ֆոնտին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax :-----

Զեր Ծանուցումները Վստահեցէ՛ք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680
 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

Burbank Airport
Bid Request General Contractors

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E11-25, Module 12.13 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, March 8, 2012.

The Work includes, but is not limited to, the following:
 Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Thirty-Six (36) Single Family Condo Units.

Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport's Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department via web site or in person at the Home Sound Office. Bids submitted by firms who have not registered with Airport via website or in person will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for February 16, 2012, at 10:00 A.M. at the Bob Hope Airport's Home Sound Office, 4540 W. Chermak Ave, Burbank, California.

INVITATION FOR BIDS
 (IFB) NO. 1715-A
 THE RE-PIPING OF (105) BUILDINGS AT RAMONA GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the Re-Piping Of (105) Buildings at Ramona Gardens. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Blvd., 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, March 6, 2012.

2/9, 2/16/12
 CNS-2250981#
 MASSIS WEEKLY

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
 Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէ՛ք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
 PASADENA, CA 91104

www.massisweekly.com updated every Friday

ՔԱՐՈՉԱՐԱԻՐԸ ԳԱՂՏՆԻ

Շարունակում է 2-էն

Սարգսեանը բաւականաչափ ծանօթ է դարաբաղեան բանակցութիւններին եւ գիտի, թէ ինչու են ծիծաղելի Ատրպէյճանի առաջարկները, եւ ինչու է Ղարաբաղը մերժում դրանք: Նախ՝ Ատրպէյճանը Ղարաբաղին առաջարկում է աւելի քիչ, քան Ղարաբաղն ունի

աչս պահին, եւ երկրորդ՝ առաջարկում է այն, ինչն իրենք չէ: Սերժ Սարգսեանը փաստօրէն նոյն վիճակում է յայտնուել, որովհետեւ պատգամաւորական մանդատներ տուողն ինքը չէ, այլ ժողովուրդը, եւ երկրորդ՝ 15 մանդատ կոնգրեսը կը ստանայ, եթէ նոյնիսկ մոռանայ նախընտրական քարոզչութիւն իրականացնել:

2011-ԵՐԵՎԱՆԵԱՆ ՕՐԵՐ

Շարունակում է 7-էն

լու մասին: Արտագաղթը շարունակուելու դէպքում Հայաստանը լուրջ խնդիրների առաջ կը կանգնի, առաջինը՝ որպէս անկախ պետութիւն իր գոյութիւնը պահպանելու հարցում:

Արտագաղթի հարցը բարձրացրեցին նաեւ Շառլ Ազնաւուրը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինը 2001 թ. Հայաստան-սփիւռք վեհաժողովում եւ բազմաթիւ անհատներ ու կազմակերպութիւններ, որոնք հայրենիքի հօրութեան, բարգաւաճման եւ յարատեւման մասին մտահոգութիւններն են յայտնում իրենց ելուցիչներում կամ գրութիւններում: «Ժամանակ» օրաթերթում (տե՛ս Ուրբաթ, 7 Հոկտեմբերի, 2011 թ., էջ 8) «Կոալիցիա ընդդէմ արտագաղթի» յօդուածում անազանգ է հնչեցւում. «Թերեւս հասունացել է պահել, որ իշխանական այդ անտարբերութիւնը յաղթահարելու համար պէտք է ձեւաւորուի համահայկական կոալիցիա, դաշինք, որի օրակարգում այդ մէկ, բայց չափազանց կարեւոր հարցը կը լինի՝ Արտագաղթը եւ այն կանխելու համազգային ջանքի անհրաժեշտութիւնը»: 1915 թ. Հայերի նկատմամբ

ցեղասպանութիւն կատարած թուրքիան չկարողացաւ բնաջնջել հայերին աշխարհի երեսից, իսկ 20-րդ դարավերջում եւ 21-րդ դարասկզբում արտագաղթը Հայաստանից աւելի շատ հայերին մղեց դէպի սպիտակ ջարդը: Պարզուում է, որ Հայաստանի իշխանութիւնը եւս մեղաւոր է սպիտակ ջարդի իրագործմանը, որը թոյլ է տալիս Ռուսաստանին Հայաստանի տարածքով մէկ գրասենականներ բանալ ու հերթադրել հայերին Ռուսաստանում բնակեցնելու համար՝ ապահովելով նրանց բոլոր ֆինանսական ծախսերը՝ տեղափոխման, սննդի, տան եւ այլն:

Միտախօսք, մերօրեայ իշխանաւորներ: Եթէ կորցնենք երկար սպասումից յետոյ ձեռք բերուած անկախութիւնը, անորոշ վիճակում կը յայտնուենք...: Հայրենիքի գոյութեան հարցը մի՛ գոհնէք ձեր գրպանների ուրծացման համար եւ լիչէք. գերհարուստ կամ աղքատ, բոլորն էլ 4 տախտակ են տանելու այս աշխարհից, միգրացիոն ձեր դադարը մի քիչ աւելի շքեղ լինի:...: Իսկ եթէ Հայաստանը կործանուի, ձեր թողած հարստութիւնն ու ընտանիքները վայելելու են օտարները... այնպէս, որ քանի շուտ է ուշքի եկէք:

ԵՐԵՎԱՆԵՐԻ ՅԱՍԱՐ

Շարունակում է 8-էն

վերանորոգութիւնների աշխատանքների մէջ, ինչպիսին էին «Խարբերդի» հաշմանդամների եւ Սպիտակի թիւ 1 դպրոցի եւ նորակառուց մարզաւանի վերանորո-

գութիւնները: Հիմնադրամը տարեցտարի փորձում է աւելի հետաքրքիր մանկական միջոցառումներ կազմակերպել եւ դրանց մէջ մասնակցող երեխաների թիւն էլ աւելի շատացնել:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ ՅԱԵՐԺՈՒԹԵԱՆԸ

Շարունակում է 15-էն

կացու Մատեանը, որը սակայն աւարտին չի հասնում՝ տպագրիչի մահուան պատճառով: 18-19-րդ դարերում Կ. Պոլսում, Վենետիկում, Զմիւռնիայում, Երուսաղէմում, Փարիզում Գրիգոր Նարեկացու Մատեանը բազմիցս հրատարակուել է:

Այս փաստերը եւս կան Պետրոսեանի հանրագիտարանում:

Այլագրի նշանաւոր մտածողները շատ բարձր են գնահատել Գր. Նարեկացու գլուխ գործոցը: Յու. Պետրոսեանը իր հանրագիտարանում ծաղկաքաղ է արել տարբեր մտածողների բնութագրականները:

«Նարեկացու հետ» հանրագիտարանը հաւաստում է, որ Գր. Նարեկացու «Մատեանը» վերժամանակեայ երեւույթ է ու համամարդկային անանց արժէք. այդ մասին վկայում են հենց օտարները:

Ֆրանսացի Լիւկ-Անդրէ Մարսելի կարծիքով թէպետ Նարեկացին յաճախ է ազդարարում մահը, սակայն նա ունայնութեան երգիչ չէ, որովհետեւ ոչ ոք նրա չափ չի պահանջել մարդու ապրելու իրաւունքը, իսկ վլադիմիր Միկուչենկովը, որը Մատեանի ուսերէն թարգմանիչներից է, գրում է. «Գր. Նարեկացին խոստովանել է իր իւրաքանչիւր ընթերցողի համար, որպէս զի իւրաքանչիւր ընթերցող բանաստեղծութեամբ խոստովանի սեփական անկատարութիւնը՝ կատարելութեան փոխելու համար»:

Հայ գրքի սիրահար ու գրադարանի պահապան Եուրի Պետրոսեանի այս հիանալի նախաձեռնութիւնը գրքի տեսքով իրականացրել է «էդիթ Պրինտ» հրատարակչութիւնը, որը եւ «Գրքարուեստ ... 2011» հանրապետական չորրորդ մրցանակաբաշխութեան ժամանակ իրաւամբ ստացել է «Գիրք գրքի մասին» անուանակարգի առաջին կարգի դիպլոմ: Մրտանց շնորհաւորում ենք ե՛ւ հանրագիտակի հեղինակին, ե՛ւ հրատարակչութեանը:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
 Զետաքրքրուողներէն հեռաձայնել՝
 (626) 398-0506

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՇԱՄԱՐ)
ԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ
 (626) 797-7680

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարոզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
 (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

DOWNLOAD NOW

Available on the **App Store**

massispost.com
daily news updates

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ՅԱՐՁԱԿՈՒՂ ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի հաւաքականի եւ «Կրասնոդարի» յարձակուող Եուրա Մովսիսեանը ծաւալուն հարցազրոյց է տուել «Սպորտ էքսպրեսին», որը ներկայացնում է Armsport.am կայքը:

Այս ձմեռան լաւագոյն ուժբարկուի հետ հարցազրոյցները հազուադէպ են պատահում նոյնիսկ ակումբի պաշտօնական կայքում: Միքստ-գոնան այս ֆուտպոլիստն անցնում է ինչպէս մրցակցի պաշտպաններին՝ չնկատելով ցուցադրուող դիմադրութիւնը: Ֆուտպոլի եւ կեանքի մասին խօսել Եուրան միշտ առաջարկում է անզերէն, որին Ամերիկայից եկած այս տղան փայլուն է տիրապետում:

-Դուք ծնուել էք Պաքուում, մանկութիւնն ու պատանեկութիւնն անցկացրել էք Փասատեմայում, իսկ պրոֆեսիոնալ կարիերայով զբաղուել էք Ռուսաստանում: Այսպիսի կենսագրութեամբ ինչպէ՞ս կարելի է կատարել հայերէն սովորել:

-Ցանկացած հայ ընտանիքում տանը խօսում են իրենց նախնիներին լեզուով: Կարելի է, թէ որտեղ էք ապրում: Լեզուն միշտ պահպանուում է: Թէկուզ հենց այն պատճառով, որ աշխարհում ապրում է 8 միլիոն հայ: Եւ նրանցից միայն 3 միլիոնն է Հայաստանում:

-Այդ պատճառով էք այսքան ընկերասեր:

-Այդ պատճառով էլ: Մեր ժողովուրդը բաւականին բարդ եւ նոյնիսկ դժբախտ պատմութիւն ունի, որպէսզի մենք մոռանանք այդ մասին եւ չզնահատենք միմեանց:

-Ձեր ծնունդից մէկ տարի անց կատարուեցին Սուվաքայի արիւնալի դէպքերը, եւ Ձեր ընտանիքը տեղափոխուեց Ամերիկա...:

-Անկեղծ ասած՝ ես չեմ յիշում մեր կեանքը Պաքուում: Եւ դժուարանում եմ հեռանալու պատճառն ասել: Հաւանաբար ծնողներս որոշեցին, որ Ամերիկայում աւելի հեշտ կը լինի մեծացնել երեխաներին, նրանց կրթութեան տալ, նոր հեռանկարներ ստեղծել: Իմ մանկութեան յուշերը կապուած են միայն Ամերիկայի հետ:

-Ձեր ընտանիքը մեծ է:

-Ծնողներս եւ երկու եղբայրներս: Ես միջնակն եմ: Փոքրը դեռ սովորում է, իսկ մեծն՝ աշխատում: Ծնողներս հանգստանում են: Բաւական է: Այսօր թող Եուրան աշխատի: Դա պէտք է բաւականացնի հարազատների բարեկեցութեան համար: Մենք շատ մտերիմ ենք, չնայած նրանք ինձանից հեռու են՝ Միացեալ Նահանգներում:

-Ձեր ընտանիքը յատուկ չէ այդ երկրին... ֆուտպոլ:

-Իսկը դպրոցականի համար է: Թող Ամերիկայում ֆուտպոլին սովորեցնեն, դպրոցներում եւ համալսարաններում այն բաւական մասսայականութիւն է վայելում: Ձբաղմունքի հարցում ես ընդհանրապէս ընտրութեան առաջ կանգնած չեմ. միայն ֆուտպոլիստ էի ցանկանում դառնալ եւ անպայման՝ պրոֆեսիոնալ: Ինձ ուրիշ ոչինչ այդքան չէր հետաքրքրում՝ ո՛չ դասերը, ո՛չ գործերը:

-Ծնողներդ ողջունեցի՞նք այդ ընտրութիւնը:

-Ինձ հնարաւոր չէր հետ համոզել: Ֆուտպոլ եւ ուրիշ ոչինչ: Բացի այդ, երբ ես սկսեցի մարզուել, ԱՄՆ-ում պրոֆեսիոնալ առաջնութիւն ի յայտ եկաւ: Դա էլ օրինակ եղաւ, որ ֆուտպոլ խաղա-

լով էլ Ամերիկայում հնարաւոր է գումար վաստակել:

-ԱՄՆ-ում մանկական դպրոցները վճարովի են: Դուք նոյնպէ՞ս վճարում էիք մարզումների համար:

-Ոչ: Իմ բախտը բերեց: Սկզբում ես յայտնուեցի լաւ մարզչի թիմում: Յետոյ մեծ եղբայրս հրաժարուեց մարզումներից, ինչն իմ օգտին էր: Նա նոյնպէս ֆուտպոլով էր զբաղուում, բայց յետոյ որոշեց օգնել ինձ եւ չվատնել ընտանիքի փողերը: Մէկ անգամ էլ բախտը ժպտաց ինձ, երբ մարզիչս աշխատանքի անցաւ ֆուտպոլի մասնագիտացուած դպրոցում եւ ինձ հետը տարաւ: Նա նաեւ հրաժարուեց մարզումների համար գումար վերցնել:

-Ինչո՞ւ: Դա ամերիկեան ոճով չէ...

-Նա եզրիպտացի է: Շարիֆ Ջաջին: Նրան դուր էր գալիս, թէ ինչպէս է խաղում մեր թիմը: Իսկ ես ջանք չէի ինչպէս: Ինձ համար ֆուտպոլն ամեն ինչ էր, այլ ոչ թէ պարզապէս հնարաւորութիւն, որը չի կարելի բաց թողնել:

Ամերիկայից Դանիա եմ տեղափոխուել ոչ փողի համար:

-Ձեր առաջին պայմանագիրը «Կանգասի» հետ, կնքեցիք դեռ համալսարանում, այդպէս չէ՞:

-Ոչ, քրեշից յետոյ՝ 19 տարեկանում: Չէ՞ որ ես կենտրոնացած էի ֆուտպոլի վրայ, ոչ թէ ուսման:

-Պրոֆեսիոնալ լաւ է վաստակում MLS-ում:

-Բոլորի աշխատավարձերը տարբեր են: Եթէ դու Անրին ես կամ Բեքհեմը, ապա վստահ կարող ես մեծ հոնորարներ ակնկալել: Ամերիկայում ցանկացած սպորտ միայն յաղթանակներ ու միաւորներ չեն, այլ նաեւ՝ շոու-բիզնես: MLS-ն փորձում է աշխատել այդ օրէնքներով՝ փնտրում է աստղեր, ամէն կերպ լիգայի վրայ է հրաւիրում ուշադրութիւնը:

-Եուրա Մովսիսեանի պայմանագիրն ու գույքը դժուար թէ նպաստում էին դրան: Միգուցէ այդ պատճառով, նուաճելով MLS-ի տիտղոսը եւ ստանալով լիգայի գործընկերների համակրանք մրցանակը, Դուք Ամերիկայից տեղափոխուեցիք Դանիա:

-Հարցը գուրդը եւ գումարը չէր: Իմ երկրորդ պայմանագիրը՝ «Ռեալ Սոլտ Լեյքի» հետ աւելի նախընտրելի էր: Լաւ էին վճարում, բայց ես հաստատ պայմանագրում նշուած գումարի համար չէի Դանիա մեկնում: Պարզապէս որոշեցի, որ կը տեղափոխուեմ Եւրոպայի հենց առաջարկ ստանամ:

-Միայն Դուք չէք այդպէս: Տարեց տարի ԱՄՆ-ի ողջ հաւաքականն է տեղափոխուում Եւրոպա: Ինչո՞ւ է այդպէս:

-Մարդիկ ցանկանում են հանդէս գալ Չեմպիոնների լիգայում կամ Եւրոպա լիգայում, խաղադաշտ դուրս գալ եւ մարզուել լաւագոյն ֆուտպոլիստների հետ: Մասնագիտական խթան, աճելու ցանկութիւն, երեւի թէ այդ է միգրացիայի գլխաւոր պատճառը: Այդ առումով ես էլ եմ այդպիսին...

-Այդ դէպքում ինչո՞ւ հետ Դանիա: Դա Եւրոպայի ամենաուժեղ առաջնութիւնը չէ...

-Իսկապէս, ուսականն աւելի ուժեղ է: Ես ընտրեցի «Ռանդերսը»՝ գիտակցելով, որ այս ակումբում ինձ ոչ միայն հնարաւորութիւն կը տան, այլ նաեւ՝ տեղ հիմնական կազմում: Ես ուզում էի խաղալ, իսկ ակումբի եւ լիգայի հզօրութիւնը երկրորդական էին:

Եթէ խաղում ես ու գոլեր ես խփում, քեզ անպայման կը նկատեն: Ես գիտէի, որ գոլերը ինձ հնարաւորութիւն կը տան Դանիայից աւելի ուժեղ առաջնութիւն տեղափոխուել:

«Կրասնոդար» տեղափոխուելը ճիշտ ընտրութիւն էր.

-Անցած ձմեռանը Ձեզ հրաւիրում էին «Ռուբին» եւ Կիելի «Պիմաձո», իսկ Դուք ընտրեցիք «Կրասնոդար»:

-...Դա լաւ ընտրութիւն էր: Այստեղ ես խաղում եմ, կոլեր եմ խփում: Ինձ համար դա է կարեւորը: Պահեստայինների նստարարանին նստելն ինձ մօտ այդքան էլ լաւ չի ստացուում:

-Նեարդայնանո՞ւմ էք:

-Երբեմն նոյնիսկ շատ ուժեղ:

-Նման բնաւորութեամբ մեծ ակումբներում Ձեզ համար դժուար կը լինի: Այնտեղ մրցակցութիւնն աւելի սուր է՝ մէկ տեղի համար 3 խաղացող: Եւ բոլորը վարպետներ:

-Կը խաղայ նա, ով աւելի ուժեղ է ու այդ օրն աւելի լաւ է նախապատրաստուած: Եթէ ես տեսնում եմ, որ մրցակիցս ինձնից իրօք ուժեղ է, ապա ոչ մի խնդիր չկայ: Իսկ եթէ մենք հաւասար մակարդակն ունենք, ապա մարզչի համակրանքից ելնելով միայն մէկն է խաղում: Նման որոշումը կը նեարդայնացնի ցանկացած ֆուտպոլիստ:

-Ճի՞շտ է, որ այս ձմեռանը Ձեզ հրաւիրում էին ԲԿՄԱ:

-Այդ մասին ոչինչ չգիտեմ: Այդ թեմայով ինձ հետ խօսել են միայն լրագրողները:

-Գործակալը կարող էր նախնական բանակցութիւններ վարել՝ ոչինչ չհրապարակելով եւ ոչ ոքի տեղեակ չպահելով նոյնիսկ Ձեզ:

-Կարծում եմ՝ դրանք պարզապէս շահարկումներ են: Բացի այդ, ես երբեք գործակալ ունեմ: Հետաքրքիր է, նրանցից ո՞ր մէկը կարող էր նման բան ասել:

-Ինչո՞ւ այդքան շատ գործակալներ ունեք:

-Մէկը զբաղուում է Ամերիկայի գործերով, միւսը Եւրոպայում է, իսկ եւս մէկը օգնում է ինձ Ռուսաստանում:

Երեւանն իմ երկրորդ տունն է -Հաւաքների միջեւ ընդմիջումների ժամանակ Դուք մեկնում էք կամ Երեւան, կամ Դոնեցկ...

-Երեւանն իմ ընկերներն են, իմ երկրորդ տունը: Ինձ շատ է դուր գալիս այդ քաղաքը:

-Իսկ Դոնեցկը:

-Այնտեղ նոյնպէս ընկերներս են: Դոնեցկում հայեր են բնակուում, մենք միասին լաւ ժամանակ ենք անցկացնում:

-Ռուսաստանում Դուք Ձեզ լեգոներ գոգ՞ւմ էք:

-Արդէն ոչ: Չնայած, ընդունելով պարոն Գալիցկիի առաջարկը, ես ամենաքիչն էի մտածում, որ նոր երկրում կարող եմ դառնալ ոչ օտար: Պարզապէս ցանկանում էի լինել նրա ծրագրի մի մասը:

-Ռուսերէնիմ արդէն տիրապետո՞ւմ ես:

-Մասամբ: Հարցազրոյցների համար դեռ քիչ բառեր գիտեմ, բայց գրեթէ ամէն ինչ հասկանում



եմ: Կարեւոր է, որ ես չեմ սխալուել ընտրութիւն կատարելիս՝ Ռուսաստանի առաջնութիւնը արագ զարգանում է, դա ամենակարեւորն է:

-Իսկ Հայաստանի հաւաքականը ամենաարագ զարգացող ազգային թի՞մն է Եւրոպայում:

-Ինձ հաճելի է դա լսել: Այո, մենք նպատակներ ունենք: Մենք ուզում ենք դուրս գալ Եւրոպայի կամ աշխարհի առաջնութեան եզրափակիչ փուլ:

-Դա իրատեսակա՞ն է:

-Մենք հաւատում ենք մեր ուժերին: Մեր գլխաւոր մարզչի հիմնական ձեռքբերումը՝ Հայաստանի հաւաքականի բոլոր ֆուտպոլիստների հաւատն է իրենց ուժերի նկատմամբ: Այս թիմը կարող է յաղթել ցանկացած հաւաքականի:

-Համարձակ յայտարարութիւն է:

-Մեզ մօտ երիտասարդ տաղանդաւոր ֆուտպոլիստների նոր սերունդ է աճել: Շատերը հանդէս են գալիս Եւրոպայում: Իսկ անձամբ Միխայիլովը ուժեղ մարտավարութիւն ունի: Նա այնպէս է կառուցում խաղը, որ մենք աւելի ու աւելի լաւ հանդէս գալիս՝ կոծկելով մեր թոյլ կողմերը:

-Այո, բայց առայժմ Հայաստանի համար դժուար է յաւակնել աշխարհի կամ Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ փուլի համար իրական պայքարի:

-Մենք կը փորձենք բարձրացնել մեր վարկանիշը:

-70-ականների «Արարատի» սերունդի փառքին հասնելու դեռ շատ կայ: Այդ թիմի աստղ Լեւոն Իշտոյեանին «Միմիձո» ֆիլմի հայ հերոսը յիշատակում է որպէս Երեւանի ամենաճանաչուած մարդկանցից մէկը:

-Ես նայել եմ «Միմիձոն» եւ գիտեմ այդ արտայայտութիւնը: Լեւոն Յարութիւնովիչը սեփական ֆուտպոլային դպրոցն ունի Հոլիւուդում:

-Որտե՞ղ:

-Հոլիւուդում՝ մեծ Լոս-Անձեյլոսում: Նրա մօտ ամէն ինչ կարգին է, նա այսօր նոյնպէս ամերիկացի է: Իսկ այն «Արարատը» հիմնալի թիմ էր: Ինչ կարիք կայ մեզ համեմատել նրա հետ:

-Հաւաքականում Դուք լաւագոյն ունեւորուել էք, ակումբում նոյնպէս: Մրցաշրջանում Ձեր լաւագոյն արդիւնքն է Դանիայում 9 կոլը, առաջին շրջանում Դուք 5 կոլ էք խփել առաջնութիւնում եւ 4-ը գաւաթի խաղարկութիւնում: Այս նշագծին հասնելու համար մնացել է միայն մէկ կոլ: Վերջնական ինչպիսի՞ արդիւնքը կը գոհացնի Ձեզ, որպէսզի ամռանը Դուք ասե՞ք՝ սա լաւագոյն մրցաշրջան էր:

-Ես չեմ սիրում գուշակութիւններ անել՝ ինչքան կը խփեմ, որ տեղը կը գրաւեմ: Աւելի լաւ է պարզապէս լաւ խաղալ եւ լաւ կատարել աշխատանքը: Չէ որ ես այն սիրում եմ: